Առաջարկություններ և դիտարկումներ շենքերի և շինությունների մատչելիության շինարարական նորմերի մասին

Ամսաթիվ՝ 29.10.2025

Մշակող՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ

Հիմնական նախագիծ՝ ՀՀՇՆ «Շենքերի և շինությունների մատչելիություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թ. նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին

Նախագծի հղումը՝ https://www.e-draft.am/projects/9216/about

Մատչելիության հայտարարություն

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ն ջանում է տեղեկատվական բոլոր նյութերը ստեղծել հաշմանդամություն ունեցող բոլոր անհատների համար մատչելի ձևաչափերով: Այս էլեկտրոնային փաստաթուղթը ևս մատչելի ձևաչափով է: Եթե այն չի համապատասխանում Ձեր կարիքներին, այլընտրանքային տարբերակները ստանալու նպատակով կարող եք գրել մեր էլ. փոստի հասցեին՝ info@dra.am: Տեղեկատվական նյութերի մատչելիության հարցումներին մենք պատասխանում ենք 48 ժամում:

Դիտարկումներ և առաջարկներ

1. Հավելվածի 1-ին կետում «համընդհանուր դիզայնը» ներկայացվում է որպես «նոր առաջադեմ սկզբունք», մինչդեռ այն ձևավորվել է դեռևս 1980-ական թվականներին՝ Ռոնալդ Մեյսի և Հյուսիսային Կարոլինայի պետական համալսարանի Համընդհանուր դիզայնի կենտրոնի կողմից, որպես մոտեցում (ոչ սկզբունք), որը հիմնված է յոթ սկզբունքի վրա և նպատակ ունի ապահովելու միջավայրի, ապրանքների և ծառայությունների օգտագործելիությունը բոլոր մարդկանց համար՝ առանց հատուկ հարմարեցումների անհրաժեշտության:

2. Հավելվածի 1-ին կետում մատչելիությունը սահմանափակում է միայն մուտքի ապահովմամբ՝ հաշմանդամություն ունեցող անձանց և «սակավաշարժ խմբերի» համար, ինչը նեղացնում է Կոնվենցիայի «մատչելիություն» հասկացության շրջանակը: Առաջարկվում է վերաձևակերպել կետը՝ ընդգծելով մատչելիության համապարփակ բնույթը և դրա կիրառելիությունը բոլոր անձանց նկատմամբ՝ անկախ առանձնահատկություններից:

3. Հավելվածի 2-րդ կետը մատչելիության պահանջները սահմանում է միայն հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար, ինչը նեղացնում է համընդհանուր դիզայնի իմաստը: Առաջարկվում է ընդլայնել ձևակերպումը՝ ընդգծելով, որ նորմերը նախատեսված են ստեղծելու կենսագործունեության հավասար պայմաններ բոլոր անձանց համար՝ անկախ նրանց ֆունկցիոնալ առանձնահատկություններից, ներառյալ տեսողության, լսողության, ճանաչողության կամ առողջական ժամանակավոր խնդիրներից, մարմնի չափսերից և այլն:

4. Հավելվածի 3-րդ կետում անհրաժեշտ է ընդգծել, որ մատչելիության պահանջները տարածվում են ոչ միայն ֆիզիկական, այլև հաղորդակցական և տեղեկատվական միջավայրի վրա՝ ապահովելով ֆիզիկական միջավայրի համալիր մոտեցում:

5. Հավելվածի 4-րդ կետում առաջարկվում են վերանայել ԳՕՍՏ հղումները՝ հնարավորության դեպքում փոխարինելով դրանք ISO կամ EN համարժեք ստանդարտներով, որպեսզի կանխվի հնացած կամ հետխորհրդային նորմերի շարունակական կիրառումը:

6. Հավելվածի 5-րդ կետը սահմանում է «ազդարարող ցուցիչներ» տերմինը, սակայն սահմանումն ամբողջական չէ և սահմանափակվում է միայն լսողության խնդիրներ ունեցող անձանցով: Առաջարկվում է ձևակերպումը վերանայել այնպես, որ այն արտացոլի բազմամոդալ հաղորդակցման սկզբունքը՝ ընդգրկելով տեսողական, ձայնային, թրթռաշոշափողական և այլ ազդանշանային մեխանիզմներ՝ ապահովելու համար տեղեկատվության մատչելիությունը բոլոր

անձանց, այդ թվում՝ տեսողության, լսողության կամ ճանաչողական խնդիրներ ունեցող օգտվողների համար:

7. Հավելվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է «բնակչության սակավաշարժուն խմբեր» հասկացությունը, սակայն այն պահպանել է հին և բժշկական մոտեցում, որը կենտրոնացած է «սահմանափակումների» վրա և պարունակում է ոչ հստակ ձևակերպումներ («և այլն», «տարեցներ»): Առաջարկվում է սահմանումը վերանայել՝ այն համապատասխանեցնելով մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմանը և հստակացնելով, որ նորմերը բարելավում են այն անձանց մասնակցությունը, որոնք տարբեր իրավիճակներում կամ պայմաններում ունեն դժվարություններ միջավայրից օգտվելու կամ հաղորդակցվելու հարցում:

8. Հավելվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետն օգտագործում է «գույքային թեքահարթակ» ձևակերպումը, որը տեխնիկապես և լեզվականորեն ոչ հստակ է: Տերմինը, ըստ էության, վերաբերում է տեղափոխելի թեքահարթակներին (portable ramps), ժամանակավոր թեքահարթակներին (temporary ramps) կամ հավաքովի կամ մոբիլ թեքահարթակներին (modular/mobile ramps): Առաջարկվում է փոխարինել այն «տեղափոխելի թեքահարթակ» ձևակերպմամբ՝ ապահովելու համար հասկացության հստակությունը և համապատասխանությունը միջազգային տերմինաբանությանը:

9. Հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետը սահմանում է «եզրաքարային թեքահարթակ» եզրույթը, որը չի արտահայտում միջազգային ստանդարտներում օգտագործվող տերմինը՝ curb cut-ը: Առաջարկում ենք մայթերի դեպքում «թեքահարթակի» փոխարեն օգտագործել «թեք կտրվածք» եզրույթը:

10. Հավելվածի 5-րդ կետի 6-րդ ենթակետը սահմանում է «զուգարանի համապիտանի խցիկ» հասկացությունը, սակայն սահմանումն ունի մի շարք խնդիրներ: Առաջարկվում է վերանայել տերմինը՝ ապահովելով իրավական և տեխնիկական հստակություն, և այն համապատասխանեցնել ISO 21542 ստանդարտի պահանջներին: Առաջարկում ենք հետևյալ ձևակերպումը. «Մատչելի զուգարանի խցիկ՝ ինքնուրույն կամ ուղեկցողի հետ օգտագործման համար նախատեսված տարածք, որն ապահովում է անվասայլակով մանևրելու բավարար տարածք, անվտանգ և հարմարավետ կահավորում բոլոր անձանց համար՝ հաշվի առնելով ֆունկցիոնալ տարբերությունները»:

11. Հավելվածի 5-րդ կետի 8-րդ ենթակետը սահմանում է «ինդուկցիոն օղակ» տերմինը, սակայն սահմանումը չափազանց նեղ է: Առաջարկում ենք հետևյալ ձևակերպումը. «8) ինդուկցիոն օղակ՝ էլեկտրամագնիսական սարք, որը փոխանցում է ձայնային ազդանշանն ուղղակիորեն լսողական ապարատին կամ կոխլեար իմպլանտին՝ նվազեցնելով ֆոնային աղմուկը և բարելավելով խոսքի ընկալելիությունը,»:

12. Հավելվածի 5-րդ կետի 10-րդ ենթակետը սահմանում է «ծառայությունների մատուցման (սպասարկման) գոտի» հասկացությունը, սակայն

սահմանումը ընդհանրական է: Առաջարկվում է հետևյալ ձևակերպումը. «10) ծառայությունների մատուցման (սպասարկման) գոտի՝ տարածք կամ հողամասի հատված, որտեղ կենտրոնացված են հանրային, վարչական կամ առևտրային սպասարկման կետեր,»:

13. Հավելվածի 5-րդ կետի 11-րդ ենթակետը չափազանց բարդ և ծավալուն է, ինչի պատճառով տերմինը դառնում է ոչ հստակ: Առաջարկում ենք առհասարակ խուսափել «բնակչության սակավաշարժուն խմբեր» հասկացությունից՝ անցում կատարելով մարդու իրավունքների մոտեցման: Ենթակետում առկա են կրկնություններ:

14. Հավելվածի 5-րդ կետի 12-րդ ենթակետը սահմանում է «հակադրություն» տերմինը, սակայն սահմանումը թերի է և մասնակիորեն սխալ տեխնիկական իմաստով: Այն չի բխում որևէ ստանդարտից (օր.՝ ISO 21542 կամ ISO 9241-303), չի սահմանում պայծառության չափման եղանակը: Բացի այդ, սահմանումը պետք է տարբերակել լուսավորության և գունային հակադրության պարագաները, որոնք ունեն տարբեր չափման սկզբունքներ:

15. Հավելվածի 5-րդ կետի 13-րդ ենթակետի «համընդհանուր դիզայն» հասկացությունը չի համապատասխանում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի հասկացությանը և կոնվենցիայի բնօրինակի սխալ թարգմանության հետևանք է: Համընդհանուր դիզայնը ոչ թե ընդգրկում է աջակցող միջոցները, այլ անհրաժեշտության դեպքում չի բացառում աջակցող միջոցների օգտագործումը: Առաջարկում ենք նույնությամբ կրկնել օրենքի սահմանումը. «13) համընդհանուր դիզայն՝ ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների դիզայն, որն առանց շտկումների և մասնագիտացված դիզայնի անհրաժեշտության յուրաքանչյուր անձի համար առավելագույն չափով մատչելի է դարձնում ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների օգտագործումը՝ անհրաժեշտության դեպքում չբացառելով հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար աջակցող միջոցների առկայությունը»:

16. Հավելվածի 5-րդ կետի 14-րդ ենթակետը խնդրահարույց է ինչպես մարդու իրավունքների, այնպես էլ իրավական տեխնիկայի տեսանկյունից: Նախ՝ «նոզոլոգիա» տերմինը վերաբերում է հիվանդությունների դասակարգմանը և չի կարելի նույնացնել այն «բժշկական և գործառնական բնութագրերի համախմբի» հետ, ինչպես նշված է տեքստում: Բացի այդ, ISO 21542 ստանդարտի և ֆունկցիոնալության միջազգային դասակարգման տեքստում «նոզոլոգիա» հասկացությունը չի օգտագործվում՝ կենտրոնանալով ոչ թե հիվանդության վրա, այլ մարդու ֆունկցիոնալության, միջավայրի և մասնակցության փոխազդեցության վրա: Այս տարբերությունը էական է, քանի որ ներկայիս ձևակերպումը պահպանում է հաշմանդամության բժշկական մոտեցումը և հակասում է կոնվենցիայի և համընդհանուր դիզայնի սկզբունքներին:

17. Հավելվածի 5-րդ կետի 16-րդ ենթակետն ունի մի քանի տեխնիկական և բովանդակային թերություններ: Նախ, սահմանումը չափազանց երկար և բարդ կառուցվածք ունի, ինչը նվազեցնում է հստակությունը: Երկրորդ, «մեծացված չափեր» ձևակերպումն անորոշ է: Բացի այդ, սահմանումը չի ընդգրկում մատչելիության այլ բաղադրիչներ, օրինակ, անցուղու առկայություն, ուղղորդող նշաններ և մակնշման պահանջներ:

18. Հավելվածի 5-րդ կետի 18-րդ ենթակետը սահմանում է «հրդեհային անվտանգության գոտի» հասկացությունը՝ այն կապելով բացառապես «բնակչության սակավաշարժուն խմբերի» հետ, ինչը սահմանափակում է հասկացության կիրառելիությունը: Այս ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ հրդեհային անվտանգության գոտին պետք է նախատեսված լինի բոլոր անձանց, ներառյալ տարբեր ճանաչողական կարողություններ ունեցող մարդկանց պաշտպանության համար: Այս ձևակերպումը պահպանել է հին՝ բժշկական և խմբային դասակարգման տրամաբանությունը: Մինչդեռ ISO 21542-ի և EN 81-70-ի համաձայն՝ հրդեհային անվտանգության գոտին պետք է նախագծվի համընդհանուր դիզայնի սկզբունքով՝ ապահովելով, որ այն մատչելի լինի բոլորի համար:

19. Հավելվածի 5-րդ կետի 19-րդ ենթակետը սահմանում է «ձայնային տեղեկատվության ընկալման ապահովման համակարգեր» հասկացությունը, սակայն այն չի համապատասխանում միջազգային տերմինաբանությանը: Միջազգային մակարդակում օգտագործվում է "assistive listening systems" կամ "assistive listening devices" ձևակերպումը, որն ընդգրկում է ինդուկցիոն օղակը, FM և ինֆրակարմիր համակարգերը՝ որպես հաղորդակցական մատչելիության միջոց, ոչ թե պարզապես ձայնի փոխանցման սարքավորում: Սահմանումը պետք է արտացոլի, որ այս համակարգերը նախատեսված են հասարակական տարածքներում ձայնային հաղորդակցությունը մատչելի դարձնելու համար՝ նվազեցնելով ֆոնային աղմուկը և ապահովելով խոսքի հստակ ընկալումը խուլ կամ թույլ լսողություն ունեցող անձանց կողմից: Ներկայիս ձևակերպումը չափազանց նեղ է և տեխնիկական, առանց մատչելիության կամ օգտագործման միջավայրի շեշտադրման:

20. Հավելվածի 5-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է «մատչելի խցիկ» հասկացությունը, սակայն սահմանումը սահմանափակվում է միայն հենաշարժական խնդիրներ ունեցող անձանցով: Սա հակասում է համընդհանուր դիզայնի սկզբունքներին, որոնք ընդգրկում են նաև տեսողության, լսողության կամ ճանաչողական առանձնահատկություններ ունեցող անձինք:

21. Հավելվածի 5-րդ կետի 21-րդ ենթակետը սահմանում է «մատչելիություն» հասկացությունը, որը, սակայն, չի համապատասխանում օրենքի հասկացությանը: Այն սահմանափակվում է միայն սակավաշարժուն խմբերով, ինչը էապես նեղացնում է տերմինի իմաստը: Մատչելիությունը կոնվենցիայի և այլ ստանդարտների համաձայն (ISO 21542, EN 301549) վերաբերում է բոլոր անձանց՝ անկախ ֆունկցիոնալ առանձնահատկություններից: Բացի այդ, սահմանումը

կենտրոնանում է միայն շենքերի և տեղեկատվական միջոցների վրա՝ բաց թողնելով տրանսպորտի, հաղորդակցման, ծառայությունների և թվային մատչելիության բաղադրիչները: Այս մոտեցումը պահպանում է հին՝ «ֆիզիկական մատչելիություն = հենաշարժական խնդիր» ընկալումը և չի արտացոլում մատչելիության լիարժեք ու համակարգային բնույթը:

22. Հավելվածի 5-րդ կետի 22-րդ ենթակետը սահմանում է «մուտք (ելք) (մատչելի)» հասկացությունը, սակայն այն սահմանափակվում է միայն «սակավաշարժուն խմբերի» և անվասայլակ օգտագործող անձանց վրա: Սա նեղացնում է մատչելիության շրջանակը՝ չներառելով տեսողության, լսողության կամ ճանաչողական առանձնահատկություններ ունեցող անձանց կարիքները:

23. Հավելվածի 5-րդ կետի 23-րդ ենթակետը սահմանում է «շոշափողական (տակտիլ) տեղեկատվության միջոցներ» հասկացությունը, սակայն սահմանումը չափազանց նեղ է և տեխնիկապես ոչ ամբողջական: Նախ՝ այն սահմանափակվում է միայն տեսողության խնդիրներ ունեցող մարդկանցով, մինչդեռ տակտիլ տեղեկությունը նախատեսված է բոլոր այն անձանց համար, որոնք օգտվում են հպման վրա հիմնված կողմնորոշման միջոցներից, օրինակ, կոգնիտիվ կամ հաղորդակցական դժվարություններ ունեցող անձինք:

24. Հավելվածի 5-րդ կետի 24-րդ ենթակետը սահմանում է «շոշափողական-ձայնային սխեմա» հասկացությունը, սակայն այն տեխնիկապես և տերմինաբանական առումով ոչ ամբողջական է: Տերմինը ձևակերպված է որպես «շոշափողական-տեսողական սխեմա», մինչդեռ ըստ սահմանման այն ներառում է ձայնային տարրեր, ինչը ստեղծում է հակասություն: Բացի այդ, սահմանման մեջ բացակայում է գործառնական նպատակի բացատրությունը՝ սխեմայի դերը որպես կողմնորոշման և տեղեկատվության մատչելիության գործիք: Միջազգային պրակտիկայում այս հասկացությունը հայտնի է որպես audio-tactile map կամ tactile-audio information board, ինչն ընդգծում է դրա կիրառությունը տարածական կողմնորոշման և տեղեկատվության մատչելիության ապահովման համար՝ հատկապես տեսողության խնդիրներ ունեցող անձանց շրջանում:

25. Հավելվածի 5-րդ կետի 25-րդ ենթակետը սահմանում է «չափեր» տերմինը, սակայն այն չափազանց տեխնիկական է և բաց է թողնում մատչելիության կամ օգտագործելիության տեսանկյունից կարևոր բաղադրիչները: Սահմանումը սահմանափակվում է միայն ֆիզիկական չափերի նկարագրությամբ՝ առանց հղման չափման միավորներին և մարդու էրգոնոմիկ համապատասխանությանը:

26. Հավելվածի 5-րդ կետի 26-րդ ենթակետը սահմանում է «սահմանափակ պայմաններ» հասկացությունը, սակայն այն ունի մի շարք էական թերություններ: Նախ՝ ձևակերպումը թողնում է լայն մեկնաբանման հնարավորություն և կարող է օգտագործվել որպես արդարացում՝ չապահովելու մատչելիությունը: Չկան հստակ չափանիշներ կամ մեթոդաբանություն, թե երբ են պայմանները համարվում «սահմանափակ» և ինչ չափով կարելի է այս հիմքով բացառել մատչելիության

պահանջների իրականացումը: Բացի այդ, սահմանումը հիմնված է միայն ֆիզիկական չափերի վրա և չի նախատեսում այլընտրանքային կամ փոխհատուցող միջոցառումների կիրառումը՝ ինչպես պահանջում են ISO 21542 ստանդարտը և կոնվենցիայի 9-րդ հոդվածը:

27. Հավելվածի 5-րդ կետի 30-րդ ենթակետը սահմանում է «վերհան սարք» հասկացությունը, սակայն ձևակերպումը չափազանց տեխնիկական է և չի ներառում մատչելիության ու անվտանգության բաղադրիչները: Այն ներկայացվում է որպես «բեռնամբարձ»: Բացի այդ, բացակայում է սահմանումը, թե երբ է այս սարքը կիրառելի որպես մատչելիության ապահովման միջոց (օրինակ՝ թեքահարթակի կամ վերելակի փոխարեն):

28. Հավելվածի 5-րդ կետի 31-րդ ենթակետը սահմանում է «տեղեկատվության արտացոլման տեսողական միջոց» հասկացությունը, սակայն այն ունի մի շարք խնդիրներ: Նախ՝ ձևակերպումը ընդհանրական է և տեխնիկապես ոչ ճշգրիտ. «արտացոլման» բառը կարող է շփոթ առաջացնել, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է տեսողական հաղորդման կամ ցուցադրման միջոցներին, ոչ թե լույսի արտացոլմանը: Բացի այդ, սահմանումը վերաբերում է միայն տեսողության խնդիրներ ունեցող անձանց ընկալմանը՝ խախտելով համընդհանուր դիզայնի սկզբունքը, ըստ որի՝ տեսողական տեղեկատվությունը պետք է լինի բոլոր օգտվողների համար ընկալելի, ներառյալ տարբեր ֆունկցիոնալ առանձնահատկություններ ունեցող անձանց: Անընդունելի է «տեսողության օրգանների գործառույթների խախտում ունեցող» նոր եզրույթի օգտագործումը:

29. Հավելվածի 5-րդ կետի 32-րդ ենթակետը սահմանում է «տեսողության խնդիրներ ունեցող անձանց ռադիոտեղեկատվության և կողմնորոշման համակարգ» հասկացությունը, սակայն այն չափազանց նեղ է և կենտրոնացած է միայն կոնկրետ օգտագործողների խմբի վրա: Համընդհանուր դիզայնի տեսանկյունից, նման համակարգերը պետք է դիտարկվեն որպես հասարակական տեղեկատվական և կողմնորոշման ենթակառուցվածքի մաս, որը կարող է լինել օգտակար տարբեր անձանց համար:

30. Հավելվածի 5-րդ կետի 33-րդ ենթակետը սահմանում է «տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձ» հասկացությունը, սակայն այն ամբողջությամբ հիմնված է բժշկական չափանիշների վրա և հակասում է մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմանը, որը կիրառվում է ՄԱԿ-ի կոնվենցիայում և միջազգային ստանդարտներում: Տերմինը սահմանափակվում է միայն ֆիզիոլոգիական ցուցանիշներով (տեսողության սրություն, տեսադաշտի տոկոս), առանց հաշվի առնելու մարդու ֆունկցիոնալ կարողությունները և միջավայրի ազդեցությունը, որոնք համարվում են հիմնական գնահատման գործոններ: Բացի այդ, սահմանումը կրկնում է հին դասակարգման մոտեցումը՝ առանձնացնելով «տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց» որպես առանձին խումբ, փոխարենը դիտարկելու տեսողության խնդիրները որպես

ֆունկցիոնալ տարբերություն: Այս ձևակերպումը չի արտացոլում այն փաստը, որ տեսողության սահմանափակումը կարող է լինել բազմազան և պահանջել տարբեր տեսակի պայմաններ:

31. Հավելվածի 6-րդ կետի ձևակերպումն ունի համակարգային և տերմինաբանական խնդիրներ, որոնք վերաբերում են ինչպես հասկացությունների սխալ օգտագործմանը, այնպես էլ մատչելիության ընդհանուր տրամաբանության նեղ ընկալմանը: Ստորև ներկայացված են հիմնական դիտարկումները՝ ենթակետերով.

ա) Տեքստում շեշտը դրված է միայն ԲՍԽ-ի (բնակչության սակավաշարժուն խմբերի) վրա, ինչը սխալ է մատչելիության ընդհանուր սկզբունքի տեսանկյունից: Մատչելիությունը պետք է դիտարկվի որպես բոլոր մարդկանց համար նախատեսված միջավայրի հատկություն՝ անկախ ֆունկցիոնալ առանձնահատկություններից (տեսողություն, լսողություն, ճանաչողական կարողություններ և այլն):

բ) Չկան և չպետք է լինեն շենքեր և կառույցներ, որոնք «ԲՍԽ-ի համար» են: Բոլոր շենքերը, կառույցները և հողատարածքները բոլոր մարդկանց համար են՝ անկախ իրենց կարողություններից և դերերից:

գ) Հայերենում հաճախ «հասանելիություն» բառն օգտագործվում է «մատչելիություն» իմաստով: Սակայն տեխնիկական և իրավական փաստաթղթերում անհրաժեշտ է տարբերակել դրանք.

- Availability (հասանելիություն)՝ որևէ ծառայության կամ տարածքի առկայություն և օգտագործման հնարավորություն (օր.՝ սպասարկման վայրերի հասանելիություն ըստ աշխատանքի ժամերի կամ հեռավորության):

- Accessibility (մատչելիություն)՝ միջավայրի, կառույցի կամ ծառայության ֆիզիկական, հաղորդակցական և տեղեկատվական օգտագործելիություն բոլոր անձանց համար՝ առանց խոչընդոտների:

Հետևաբար, այս կետի 1-ին ենթակետում «սպասարկման վայրերի հասանելիություն» ձևակերպումը պետք է դիտարկվի մատչելիություն իմաստով:

դ) Բոլոր 4 ենթակետերը կառուցված են այնպես, կարծես նախատեսված են բացառապես որոշակի խմբի՝ «ԲՍԽ-ի» կարիքների համար: Սա սխալ ուղղություն է, քանի որ.

- տարհանման, տեղաշարժման, տեղեկատվության ստացման և սպասարկման ապահովումը պետք է լինի համընդհանուր սկզբունք,

- նախագծային լուծումները պետք է արտացոլեն մարդկային բազմազանության ամբողջ շրջանակը, ոչ միայն ֆիզիկական նկատառումները:

ե) Լեզուն պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի համընդհանուր դիզայնի մոտեցումը՝ օրինակ. «Նախագծային լուծումները պետք է ապահովեն բոլոր անձանց՝ անկախ ֆունկցիոնալ առանձնահատկություններից, անվտանգ, մատչելի պայմաններ շենքերում, կառույցներում և դրանց տարածքներում»:

32. Հավելվածի 7-րդ կետում կրկին շեշտը դրված է միայն «ԲՍԽ-ի» վրա, ինչը նեղացնում է մատչելիության սկզբունքը և հակասում է համընդհանուր դիզայնի մոտեցմանը: Տեքստը պետք է վերաբերի բոլոր մարդկանց, ոչ թե առանձնացված խմբերին:

33. Հավելվածի 9-րդ կետում կիրառված ձևակերպումը ենթադրում է, որ մատչելիության ապահովումը կարող է հակասել կամ խոչընդոտել շենքի մյուս օգտվողների հնարավորություններին, ինչը սխալ և խտրական ենթադրություն է: Համընդհանուր դիզայնի սկզբունքի համաձայն՝ միջավայրի մատչելիության բարձրացումը բարելավում է բոլոր օգտվողների պայմանները, այլ ոչ թե սահմանափակում է որևէ խմբի հնարավորությունները: Բացի այդ, ձևակերպումը շարունակում է մատչելիությունը դիտարկել որպես հատուկ կամ լրացուցիչ պահանջ՝ որոշակի խմբի համար, այլ ոչ որպես միջավայրի որակական բնութագիր, որը նախատեսված է բոլորի համար՝ առանց խտրականության:

34. Հավելվածի 10-րդ կետում մատչելիության պահանջները սահմանափակվում են միայն տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանցով, ինչը նեղացնում է նախագծային լուծումների շրջանակը և հակասում է համընդհանուր դիզայնի սկզբունքին: Կետը պահպանել է բժշկական մոտեցումը՝ չընդգրկելով այլ անձանց:

35. Հավելվածի 10-րդ կետի աղյուսակի դասակարգումը պահպանել է հին բժշկական մոտեցումը, ըստ որի մարդիկ բաժանվում են ըստ ֆունկցիոնալ «սահմանափակումների», ոչ թե միջավայրի հարմարեցման պահանջների: Այս մոտեցումը հակասում է կոնվենցիայի և ISO 21542-ի տրամաբանությանը, որտեղ շեշտը դրվում է միջավայրի ներառականության վրա, ոչ թե մարդկանց տարբերության: ISO 21542-ում երբեք չեն կիրառվում ֆիզիոլոգիական կամ բժշկական չափանիշներ: Փոխարենը սահմանվում են օգտվողների կարիքների կատեգորիաներ, ինչպիսիք են՝ տեղաշարժման դժվարությունը, տեսողության խնդիրները, լսողության խնդիրները, ճանաչողական կամ հաղորդակցական խնդիրները: Աղյուսակը պետք է ամբողջությամբ վերանայվի՝ հիմնվելով ոչ թե մարդկանց դասակարգման, այլ միջավայրի ֆունկցիոնալ պահանջների ապահովման վրա:

36. Աղյուսակն անվանվում է «շարժունակության խմբերի դասակարգում», բայց ներառում է նաև զգայական և սոցիալ-տարիքային հատկանիշներ (օրինակ՝ նախադպրոցական տարիքի երեխաներ, հղիներ), որոնք չեն կարող նույն չափանիշներով դասակարգվել:

37. Հավելվածի 10-րդ կետի աղյուսակ 1-ում ներկայացված դասակարգումն ունի մի շարք հիմնարար խնդիրներ: «U1» խմբում միևնույն շարքում են ներառված տարեցներ, երեխաներ, հղի կանայք և խուլ կամ թույլ լսողություն ունեցող անձինք, մինչդեռ վերջինները չեն պատկանում «շարժունակության սահմանափակում» ունեցող խմբին: Սա ցույց է տալիս, որ աղյուսակը խառնում է ֆիզիկական և զգայական գործոնները՝ առանց հստակ չափանիշների:

38. «ՈՉ Շարժունակ», «ՈՉ Տեղափոխելի», «Սահմանափակ Ազատության» խմբային անվանումներն օգտագործում են բացասական ձևակերպումներ, որոնք մարդու արժանապատվությունը նսեմացնող են և հակասում են կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված հարգանքի սկզբունքին: Դրանք բժշկականացված են և մարդու անձնային հատկանիշները ներկայացնում են որպես ֆունկցիոնալ «անընդունակություն»:

39. «Հաշմանդամներ» բառի օգտագործումը որպես գոյական անթույլատրելի է և պետք է բացառել ամբողջ նախագծից: Այն ամբողջությամբ հակասում է կոնվենցիայի սկզբունքներին և մարդու իրավունքների մոտեցմանը:

40. «Մարդիկ, ովքեր չունեն ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունը» եզրույթը չափազանց անորոշ է և անհասկանալի է, թե ում է ներառում: Արդյոք սայլակ օգտագործող անձինք, որոնք առանց սայլակի չեն տեղաշարժվում, կարող են համարվել «ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորություն» չունեցող:

41. «Ոչ տեղափոխելի» կամ «կյանքին ուղղակի սպառնալիք» ձևակերպումները չափազանց գնահատողական են և ոչ մասնագիտական՝ առանց հստակ չափանիշների:

42. Հոգեկան շեղումներ» եզրույթը խիստ խտրական ձևակերպում է և դրա օգտագործումը պետք է բացառել: Որպես հոգեսոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող կազմակերպություն «հոգեկան շեղումներ եզրույթի օգտագործումը համարում ենք անընդունելի ցանկացած պարագայում:

43. Խնդրում ենք զերծ մնալ նոր և ավելի խտրական ձևակերպումներ շրջանառության մեջ դնելուց: «Սահմանափակ ազատության աստիճան ունեցող մարդիկ» ձևակերպումը սխալ է, քանի որ «ազատության սահմանափակումը» իրավական, ոչ թե ֆունկցիոնալ կատեգորիա է:

44. Հավելվածի 6-րդ բաժնի 11-րդ կետում նշվում է, որ հողամասում պետք է ներառվեն ԲՍԽ-ի մեքենաների մուտքի և կայանման տեղեր, ինչպես նաև հարմար հետիոտնային երթուղիներ: Անհասկանալի է, թե արդյոք կայանման տեղը պարտադիր է բոլոր դեպքերում, թե կան բացառություններ: Բացի այդ, բացակայում է հստակ պահանջ, որ այս տարրերը պետք է լինեն ֆունկցիոնալ առումով կապված՝ կայանատեղիից մինչև շենքի մուտք միասնական մատչելի երթուղու միջոցով՝

առանց խոչընդոտների: ISO 21542-ը նման դեպքերում պահանջում է ապահովել «continuous accessible path of travel»՝ անընդհատություն առանց բարձրության տարբերությունների և անցումային խոչընդոտների:

45. Հավելվածի 6-րդ բաժնի 12-րդ կետում «ազատ» բառն առաջարկում ենք փոխարինել «անարգել» բառով, իսկ «սարքեր» բառից հետո լրացնել «և ֆիզիկական տարրեր» բառերով:

46. Հավելվածի 6-րդ բաժնի 17-րդ կետում սահմանված են չափեր, բայց օգտագործվում է «առնվազն 2 մ» չափանիշը՝ առանց մարդկանց հոսքի ինտենսիվության կամ երկկողմանի երթևեկության մասին նշելու: Անհրաժեշտ է տարբերակել երկկողմանի և միակողմանի երթևեկության նվազագույն լայնությունները, որոնք պետք է հաշվարկվեն ըստ հնարավոր հոսքի:

47. Հավելվածի 6-րդ բաժնի 18-րդ կետում թույլատրվում է մինչև 8 % թեքություն՝ «սահմանափակ տարածության դեպքում»: ISO 21542 ստանդարտի համաձայն՝ նման բացառությունը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ տեղանքի առանձնահատկությունները կամ կառուցված միջավայրը տեխնիկապես չեն թողնում ավելի մեղմ լուծում: Ներկայիս ձևակերպումը թույլ է տալիս 8 % թեքություն նաև տարածության պակասի պարագայում: Հետևաբար անհրաժեշտ է հստակեցնել, որ նման թեքությունը կիրառելի է միայն բացառիկ դեպքերում՝ տեղանքի փաստացի սահմանափակումների առկայությամբ և պարտադիր փոխհատուցման միջոցների ապահովմամբ:

48. Հավելվածի 6-րդ բաժնի 25–26-րդ կետերում ծածկույթի շփման գործակիցների պահանջները տրված են, սակայն անհրաժեշտ է դրանք լրացնել նաև փորձարկման եղանակներով և մեթոդաբանությամբ, ինչն այստեղ բացակայում է: Կարևոր է սահմանել նաև փորձարկման ստուգման ընթացակարգ:

49. Հավելվածի 6-րդ բաժնի 27–34-րդ կետերում սանդուղքների չափերը որոշ առումով համապատասխանում են ISO 21542-ի միջակայքերին, սակայն բացակայում է խիստ կապը շոշափողական և լուսային հակադրության պահանջների հետ: Յուրաքանչյուր աստիճանի եզր պետք է ունենա հակադրվող գույն և շոշափելի եզրագիծ՝ տեսողության խնդիր ունեցող անձանց համար:

50. Հավելվածի 6-րդ բաժնի 44-րդ կետում լուսավորության նվազագույն մակարդակը նշված է (100 լյուքս), սակայն անհրաժեշտ է անդրադառնալ նաև գունային ջերմաստիճանի համապատասխանությունը (3000–5000 K) և շողքի բացակայություն (glare index control)՝ ինչն այստեղ բացակայում է:

51. Հավելվածի 6-րդ բաժնի 45–48-րդ կետերում ջրահեռացման ցանցերի չափերի վերաբերյալ թվերը համապատասխանում են ԳՕՍՏ-ին, բայց ոչ լիովին ISO-ին: Բացվածքի առավելագույն լայնությունը չպետք է գերազանցի 8 մմ, քանի որ 13 մմ բացվածքը վտանգավոր է փոքր անվասայլակների և ձեռնափայտերի համար:

52. Հավելվածի 6.2 բաժնի 49-րդ կետում սահմանված է, որ ավտոկայանատեղերում առնվազն 10% մեքենատեղ պետք է հատկացվի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սակայն տոկոսային չափորոշիչն անթույլատրելիորեն միատեսակ է բոլոր օբյեկտների համար: ISO 21542-ը և EN 81-70 ստանդարտն առաջարկում են տարբեր բաշխում՝ ըստ ֆունկցիոնալ նպատակի և հոսքի: Նման ընդհանուր մոտեցումը կարող է բերել ինչպես չարդարացված ավելացման, այնպես էլ նվազեցման դեպքերի:

53. Հավելվածի 6.2 բաժնի 50-րդ կետում տրվում են ընդհանուր չափանիշներ, սակայն բացակայում է հստակ հղում կողային ազատ գոտիների լայնության նկատմամբ: Առաջարկում ենք սահմանել, որ մուտքի կողային ազատ տարածքը պետք է լինի առնվազն 1,2 մ լայնությամբ, իսկ հետևից՝ առնվազն 1,5 մ:

54. Հավելվածի 6.2 բաժնի 3-րդ աղյուսակի տրամաբանությունը հիմնված է մեքենատեղերի ընդհանուր քանակի վրա, սակայն բացակայում է նվազագույն պահանջների համատեքստային սահմանում՝ ըստ օբյեկտի տեսակի (օրինակ՝ մարզադաշտ, դպրոց, հիվանդանոց և այլն): Անհրաժեշտ է սահմանել հատուկ բաշխման ցուցանիշներ ըստ կառույցի ֆունկցիայի և օգտվողների քանակի, այլ ոչ միայն ընդհանուր թվաքանակի:

55. Հավելվածի 6.2 բաժնի 52-րդ կետում նշված են նշագծման պահանջները, սակայն դրանք հիմնված են միայն ճանապարհային երթևեկության կանոնների վրա, ոչ թե մատչելիության սկզբունքների: Առաջարկում ենք սահմանել, որ յուրաքանչյուր մատչելի կայանատեղի ունենա հակադրվող գունային ֆոն (high-contrast marking) և տակտիլային նշան՝ կողմնորոշման համար:

56. Հավելվածի 6.2 բաժնի 53-րդ կետում տրված են մուտքից հեռավորության չափորոշիչներ՝ 50, 100 և 200 մ, սակայն այդ արժեքները չափազանց մեծ են և չեն համապատասխանում միջազգային մոտեցումներին: Եվրոպական (EN 17210) և ամերիկյան (ADA Standards) ստանդարտներում ընդգծվում է, որ մատչելի երթուղին պետք է լինի ամենակարճ հնարավոր ճանապարհով դեպի շենքի հիմնական մատչելի մուտք: Միայն որոշ բրիտանական ուղեցույցներ (BS 8300) են ընդունում մինչև 50 մ առավելագույն հեռավորություն՝ բացառիկ դեպքերում: Առաջարկվում է վերանայել չափորոշիչները՝ սահմանելով ամենակարճ մատչելի երթուղու սկզբունքը:

57. Հավելվածի 6.2 բաժնի 54-րդ կետում նշվում են նստեցման/իջեցման վայրերի պահանջները, բայց բացակայում է պայմանը, որ այդ վայրերը պետք է լինեն նշանակված գոտի՝ հստակ գծանշմամբ, պաշտպանված տրանսպորտային հոսքից և ապահով շփման գոտիով (safety zone ≥ 1,2 մ):

58. Հավելվածի 6.2 բաժնի 56-րդ կետում նշված չափերը (6,0 × 3,6 մ) համընկնում են հիմնականում ռուսական ԳՕՍՏ-ի մոտեցմանը, սակայն ավելի առաջադեմ ստանդարտներն առաջարկում են տարբեր չափեր՝ ըստ կայանման ձևի

(angled, parallel, perpendicular): Օրինակ՝ կողային մուտքով կայանման համար անհրաժեշտ է առնվազն 8,0 × 3,9 մ, ինչն ապահովում է անվասայլակի մանևրելու տարածք:

59. Հավելվածի 6.3 բաժնի 60-րդ կետում նշվում է ելուստային տարրերի թույլատրելի չափը, սակայն անհրաժեշտ է վերանայել մարդկային ընկալման ռիսկերի վերլուծությամբ: Նման տարրերի համար առաջարկում ենք սահմանել շոշափելի կերպով տարբերակելի դարձնելու պահանջ (contrasting strip կամ tactile warning band):

60. Հավելվածի 6.3 բաժնի 61-րդ կետում նշված է եզրերի կլորացման պահանջ (0.05 սմ), ինչը հավանաբար տպագրական սխալ է, քանի որ շառավիղը չափազանց փոքր է և տեխնիկապես անիմաստ: Առաջարկում ենք սահմանել նվազագույն շառավիղը՝ 2 մմ (0.2 սմ), իսկ վտանգավոր հատվածներում՝ 5 մմ:

61. Հավելվածի 6.4 բաժնի 65-րդ կետում սպասման հարթակի չափերը նշված են, սակայն բացակայում է մանևրելու շրջան 1.5 մ տրամագծով, հակադրության և շողքավորման վերահսկման պահանջները, ինչպես նաև նստելու տեղերի կողմնային ազատ գոտիները:

62. Հավելվածի 6.4 բաժնի 66-րդ կետում սահմանափակ տարածքում թույլատրվում է հարթակ ճանապարհի մակարդակով, բայց չկան հստակ չափորոշիչներ գծանշման լայնության, տակտիլային գոտու չափերի և ֆիզիկական արգելափակիչների վերաբերյալ, ինչը կարող է նվազեցնել անվտանգության մակարդակը:

63. Հավելվածի 6.4 բաժնի 69-րդ կետում կենտրոնական թեքությունը թույլ է տալիս մինչև 8% սահմանափակ պայմաններում, բայց բացակայում է պարտադիր փոխհատուցող միջոցառումներ, օրինակ, կրկնակի բռնաձող, հարթակներ, չսահող ծածկույթ:

64. Հավելվածի 6.4 բաժնի 70-րդ կետում թույլատրվում է ճանապարհը մինչև 5 մմ ցածր լինելը, սակայն չի նշվում եզրային անցման հարթության անդուրժողականությունն ամբողջ լայնքով և անիվների խրվելու ռիսկի նվազեցման միջոցները:

65. Հավելվածի 6.4 բաժնի 71-րդ կետում պահանջվում են շոշափողական-հակադրվող ցուցանակներ, սակայն հղումները հիմնված են միայն ԳՕՍՏ-ի վրա: Բացակայում է գունային հակադրության թվային շեմ, նյութի պրոֆիլի բարձրության միջակայք և ձայնային ազդարարիչի պարտադիր տրվելը մեծ հոսքով անցումների դեպքում:

66. Հավելվածի 6.4 բաժնի 74-րդ կետում լյուքսի նվազագույն մակարդակը նշված է, սակայն բացակայում է շողքավորման գործակցի սահմանաչափ, գունային

ջերմաստիճանի միջակայք և լուսավորության միասեռության գործակից, որոնք կարևոր են թույլ տեսնող անձանց համար:

67. Հավելվածի 6.4 բաժնի 75-րդ կետում ռելսի բարձրության 10 մմ շեմը կարող է մնալ խոչընդոտ փոքր անիվների և ձեռնափայտի ծայրերի համար: Չկա պահանջ լրացուցիչ լցոնման կամ ռեզինե ներդիրների վերաբերյալ անցման գոտում:

68. Հավելվածի 6.4 բաժնի 76-րդ կետում պաստառով սահմանափակվելը, որ երկաթուղին հատելը հնարավոր է միայն ուղեկցողի հետ, ստեղծում է խտրական մոտեցում և չի առաջարկում լուծումներ անկախության ապահովման համար՝ օրինակ ավտոմատ ձայնային ազդարարիչներ, պաշտպանված խաչմերուկային գոտի և վերահսկվող ազդանշանային համակարգ:

69. Հավելվածի 7.1 բաժնի 77-րդ կետում օգտագործվում է «հասանելի» բառը: Պետք է հստակ տարբերակվի «availability» (գոյություն ունենալ, առկա լինել) և «accessibility» (մատչելիություն) հասկացությունների օգտագործում: Բացի այդ, «ԲԱԽ» հապավումը սխալ է, անհրաժեշտ է պահպանել «ԲՍԽ» տերմինը, եթե առհասարակ որոշում է կայացվում պահպանել այդ եզրույթը:

70. Հավելվածի 7.1 բաժնի 78-րդ կետում թեքահարթակի պահանջը ներկայացված է ընդհանուր ձևով, առանց հստակեցման, թե ինչն է համարվում «ժամանակավոր թեք կոնստրուկցիա» և որն է տարբերությունը «հաստատուն» թեքահարթակի:

71. Հավելվածի 7.1 բաժնի 79-րդ կետում թույլատրվում է մինչև 10 % թեքություն, սակայն բացակայում է առավելագույն երկարության սահմանումը, ինչը կարող է հանգեցնել չափազանց կտրուկ և ոչ անվտանգ թեքահարթակների նախագծմանը: Տարբեր ստանդարտների համաձայն՝ նման թեքությունը թույլատրվում է միայն շատ կարճ հատվածներում՝ առավելագույնը 2 մ երկարությամբ և մինչև 20 սմ բարձրության տարբերությամբ: Բացի այդ, անհրաժեշտ է հստակ սահմանել բռնաձողերի առկայության, ձևի և տեղակայման պահանջները, քանի որ նույնիսկ փոքր բարձրությունների դեպքում դրանք ապահովում են կայունություն և անվտանգության նվազագույն մակարդակ: Առաջարկվում է սահմանել, որ մինչև 10 % թեքությամբ թեքահարթակ կարելի է կիրառել միայն բացառիկ դեպքերում՝ ոչ ավելի քան 2 մ երկարությամբ և երկու կողմերից բռնաձողերի պարտադիր տեղադրմամբ:

72. Հավելվածի 7.1 բաժնի 81-րդ կետում մուտքի հարթակի չափերը տրված են, սակայն բացակայում է պահանջ ազատ շրջադարձի տրամագծի վերաբերյալ:

73. Հավելվածի 7.1 բաժնի 82-րդ կետում թույլատրվում է դռների նեղացում մինչև 0,8 մ, ինչը նվազեցնում է մատչելիությունն անվասայլակով տեղաշարժվող անձանց համար:

74. Հավելվածի 7.1 բաժնի 84-րդ կետում կետը կախված է հղումից (143-րդ կետ), սակայն չի ապահովում, որ 15 անձի շեմը ներառում է նաև ուղեկցողներին, ինչը կարող է նվազեցնել ընդհանուր անվտանգությունը:

75. Հավելվածի 7.1 բաժնի 85-րդ–87-րդ կետերում տեսանելի նշումների չափերն ու դիրքերը տրված են, սակայն բացակայում է հակադրության տոկոսային հարաբերակցությունը (օրինակ՝ LRV ≥ 70%), ինչպես նաև նյութի փայլի գործակցի սահմանափակումը՝ շողալը կանխարգելելու համար:

76. Հավելվածի 7.1 բաժնի 88-րդ կետում ավտոմատ դռների օգտագործման դեպքերը չափազանց սահմանափակ են ներկայացված: Պետք է հստակեցնել նաև սենսորների զգայունությունը և բացման արագությունը՝ հաշվի առնելով տեղաշարժման դժվարություններ ունեցող օգտվողների արձագանքման ժամանակը:

77. Հավելվածի 7.1 բաժնի 93-րդ կետում տուրնիկետների նվազագույն լայնությունը (0,95 մ) սահմանափակ կարող է լինել որոշ էլեկտրական անվասայլակների համար: Պետք է հստակեցնել ոչ միայն լայնությունը, այլ նաև բարձրության, արձագանքման ժամանակի և գործառնական հսկողության պահանջները:

78. Հավելվածի 94-րդ կետում նշված լայնության չափանիշներն ընդհանուր են և չեն տարբերակում ֆունկցիոնալ օգտագործման տեսակները (օրինակ՝ վարչական շենք, բժշկական կազմակերպություն, ուսումնական հաստատություն և այլն): Բացի այդ, պետք է հստակեցնել, որ միջանցքի իրական անցանելի լայնությունը հաշվարկվում է առանց հենասյուների, բռնաձողերի կամ այլ ելուստների:

79. Հավելվածի 95-րդ կետում անվասայլակի մանևրման տարածքի չափերը տրված են նվազագույն սահմաններով, սակայն բացակայում է պահանջ հորիզոնական հարթության վերաբերյալ (±2%)՝ ապահովելու համար անվասայլակի կայունությունը: Պետք է նաև հստակեցնել, որ նշված չափերը կիրառելի են առանց դռան շարժման կամ կահույքի տեղաշարժի ազդեցության տարածքների դեպքում:

80. Հավելվածի 96-րդ ում պետք է ավելացնել պահանջ՝ որ բոլոր կախված տարրերը (օրինակ՝ լուսատուներ կամ օդափոխիչներ) պետք է տեղադրվեն այնպես, որ չնվազեցնեն այս բարձրությունը միջանցքի ամբողջ երկարությամբ:

81. Հավելվածի 99-րդ կետի շոշափողական նախազգուշացնող ցուցանակների սահմանումը խիստ սահմանափակ է: Դրանք չպետք է բացառվեն բնակելի շենքերից կամ ուումնական հաստատություններից, քանի որ տեսողության խնդիր ունեցող բնակիչներն ու աշակերտները նույնպես ունեն հավասարության իրավունք:

82. Հավելվածի 100-րդ կետի շեմերի առավելագույն բարձրությունը (1,4 սմ) չափազանց բարձր է: Առաջարկում ենք սահմանել առավելագույն 1,3 սմ

(լավագույնը՝ 0,6 սմ): Բացի այդ, անհրաժեշտ է ավելացնել պահանջ, որ եթե շեմից հնարավոր չէ խուսափել, այն պետք է լինի կլորացված եզրով կամ սահուն անցումով:

83. Հավելվածի 101-րդ կետի հանգստի գոտիների պահանջը դրական է, սակայն անհրաժեշտ է ավելացնել, որ գոտիներում պետք է լինի ազատ տարածք անվասայլակի կողային դիրքով կայանման համար (առնվազն 0,9 × 1,4 մ):

84. Հավելվածի 102-րդ կետի ելուստների առավելագույն արժեքները բավարար են, սակայն բացակայում է տարբերակումն ըստ տարածքի ֆունկցիայի: Օրինակ՝ երեխաների հաստատություններում կամ տարեցների սպասարկման կենտրոններում ելուստները պետք է սահմանափակվեն առավելագույնը 0,05 մ: Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել, որ նշված չափերը վերաբերում են մաքուր ուղուն:

85. Հավելվածի 103-րդ կետի կլորացված եզրերի պահանջը ողջունելի է, սակայն պետք է ավելացնել նվազագույն շառավիղ՝ $R \geq 0,5$ սմ, որպեսզի եզրերը լինեն անվտանգ հպման կամ բախման դեպքում:

86. Հավելվածի 105-րդ կետի գորգերի պահանջները ողջունելի են, բայց պետք է լրացվի՝ որ գորգերի և հատակի միջև չպետք է առաջանա մակարդակի տարբերություն ավելի քան 2 մմ, իսկ ծածկույթի շփման գործակիցը չպետք է լինի պակաս, քան 0,4:

87. Հավելվածի 106-րդ կետը սահմանում է ընդհանուր պահանջ, սակայն անհրաժեշտ է հստակեցնել, որ ցանկացած մակարդակի տարբերության դեպքում պետք է առաջնահերթ ապահովվի անվասայլակով և տեղաշարժման այլ դժվարություններ ունեցող անձանց ինքնուրույն տեղաշարժման հնարավորություն, իսկ սանդուղքները համարվում են երկրորդային լուծում:

88. Հավելվածի 108-րդ կետի աստիճանների չափերը և մակերևույթը հիմնականում ողջունելի են, սակայն անհրաժեշտ է ավելացնել, որ սանդղամատի լայնությունը պետք է բոլոր աստիճանների վրա լինի միանման ±5 մմ ճշտությամբ, որ կոշտության գործակիցը պետք է լինի առնվազն 0,4 չոր պայմաններում և 0,3՝ խոնավ պայմաններում: Անհրաժեշտ է բացառել փայլուն և արտացոլող մակերևույթների օգտագործումը:

89. Հավելվածի 109-րդ կետի շոշափողական և գունային նշումները պարտադիր են, սակայն ձևակերպումը պետք է լինի տեխնիկապես հստակ՝ նշելով, որ նշագծման գույնի լուսային հակադրությունը պետք է լինի առնվազն 70% տարբերություն հարակից մակերևույթի նկատմամբ: Լուսաֆլյուորեսցենտային նյութերի կիրառումը ցանկալի է դարձնել պարտադիր փակ տարածքներում՝ արտակարգ լուսավորության պայմաններում կողմնորոշման համար:

90. Հավելվածի 111-րդ կետի ապակե և փայլեցված նյութերի արգելքը պետք է տարածել նաև մետաղական փայլուն մակերևույթների վրա, որոնք կարող են առաջացնել շլացուցիչ անդրադարձ կամ սայթաքման վտանգ:

91. Հավելվածի 117–118-րդ կետերի գույքային թեքահարթակների թույլատրումը պետք է հստակ պայմանավորվի ժամանակավոր բնույթի հետ և արգելվի դրանց մշտական օգտագործումը: Բացի այդ, պետք է ավելացնել պահանջ՝ որ դրանք ունենան բռնաձող և հակասայթաքող մակերևույթ, իսկ տեղադրման պահին ապահովվի առավելագույն կայունություն (չթեքվել 5 մմ-ից ավելի):

92. Հավելվածի 123-րդ կետի պահանջը տրամաբանական է, սակայն պետք է հստակեցնել, որ բոլոր նոր կառուցվող բազմահարկ հասարակական և բազմաբնակարան շենքերում առնվազն մեկ մարդատար վերելակ պետք է լինի լիարժեք մատչելի: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել, որ վերելակը պետք է լինի ուղիղ ճանապարհով մատչելի հիմնական մուտքից՝ առանց աստիճանների կամ միջանկյալ շեմերի:

93. Հավելվածի 124-րդ կետը ևս տրամաբանական է, բայց պետք է հստակեցնել, որ ուղղաձիգ կամ թեք ամբարձիչ հենահարթակների օգտագործումը թույլատրելի է միայն, եթե վերելակի տեղադրումն օբյեկտիվորեն անհնար է, և այն չի կարող համարվել վերելակի համարժեք փոխարինող: Առաջարկում ենք ավելացնել պահանջ՝ այդպիսի լուծումները պետք է նախապես հիմնավորվեն նախագծման առաջադրանքով և հաստատվեն տեխնիկական փորձաքննությամբ:

94. Հավելվածի 125-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ հաշվարկները պետք է կատարվեն ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց թվով, այլ նաև՝ շենքի գործառնական նշանակությամբ և սպասարկվող հարկերի քանակով:

95. Հավելվածի 126-րդ կետի պահանջը տեխնիկապես ճիշտ է, բայց պետք է ավելացնել՝ վերելակի դռան բացման ժամանակը՝ առնվազն 8 վայրկյան, որպեսզի ապահովվի անվասայլակով մուտքի հնարավորությունը: Դռան բացման և փակման գործընթացը պետք է ուղեկցվի տեսողական և ձայնային ազդանշաններով: Կանչի վահանակները պետք է տեղադրվեն 0,9–1,2 մ բարձրության վրա՝ հորիզոնական շառավղով ոչ ավելի, քան 0,5 մ դռանից:

96. Հավելվածի 128-րդ կետում անհրաժեշտ է նաև պահանջել, որ դրանք ունենան ձայնային, տեսողական և շոշափելի ազդանշանների համակարգ՝ տարբեր անձանց մատչելիության ապահովման համար:

97. Հավելվածի 131-րդ և 132-րդ կետերիի տարհանման պահանջները շատ կարևոր են, սակայն պետք է ավելացնել, որ տարհանման վերելակները պետք է լինեն հատուկ նախագծված "evacuation lifts"՝ EN 81-76-ի համաձայն, որոնք ունեն հերմետիկ խցիկ, հրդեհակայուն դռներ, ինքնավար էներգամատակարարում առնվազն 2 ժամ:

98. Հավելվածի 133-րդ–135-րդ կետերի տարհանման հաշվարկների մեթոդաբանությունը տեխնիկապես ընդունելի է, բայց տեքստում անհրաժեշտ է ավելացնել, որ հաշվարկները պետք է կատարվեն՝ ըստ ամենաբարձր հարկի զբաղեցվածության, մոդելավորման արդյունքները պետք է ամրագրվեն հաշվարկային հավելվածով, հաշվարկը ենթակա է պետական փորձաքննության հաստատման:

99. Հավելվածի 137-րդ կետում անհրաժեշտ է նաև պարտադիր դարձնել, որ ձայնային ազդանշանների ուժգնությունը չգերազանցի 80 դԲ, որպեսզի չստեղծի անհարմարություն լսողական զգայունություն ունեցող մարդկանց համար: Դիսպետչերի հետ կապը պետք է ապահովի տեսային հաղորդակցություն կամ հաղորդագրությունների ցուցադրում էկրանին՝ լսողության խնդիր ունեցող ուղևորների համար:

100. Հավելվածի 138-րդ և 139-րդ կետերում պետք է ավելացնել, որ ամբարձիչ հենահարթակները պետք է ունենան ավտոմատ կանգառի և շարժման արգելափակման համակարգ, եթե խոչընդոտ է հայտնաբերվում: Դրանց կառավարման վահանակները պետք է տեղադրվեն 0,9–1,2 մ բարձրության վրա, և ունենան շոշափելի տարբերակիչներ:

101. Հավելվածի 141-րդ կետի տեքստն ընդհանուր բնույթի է և անհրաժեշտ է ընդգծել, որ առանձնահատկությունները (հոգեֆիզիոլոգիական, սենսորային, շարժունակության) պետք է հաշվարկվեն ոչ միայն նորմատիվ հղումներով, այլ նաև՝ ըստ իրական մոդելավորման տվյալների և շենքի գործառնական տեսակի: Խորհուրդ է ավելացնել, որ տարհանման պլաններում պետք է ներառվեն մատչելի ձևաչափով ներկայացված ուղեցույցներ և քարտեզներ (հասկանալի լեզվով, Բրայլի գրով, տեսողական հակադրությամբ):

102. Հավելվածի 143-րդ կետում անհրաժեշտ է ավելացնել, որ դռները պետք է բացվեն տարհանման ուղղությամբ, իսկ բացման ընթացքում չպետք է խոչընդոտեն շարժման ուղուն կամ հանգստի գոտիներին: Բացի այդ, անհրաժեշտ է ներառել պահանջ՝ դռների մոտ ապահովել հորիզոնական հարթակներ առնվազն 1,5 × 1,5 մ չափերով՝ անվասայլակով մանևրելու համար:

103. Հավելվածի 144-րդ կետում պետք է հստակեցնել, որ 1,2 մ լայնությունը վերաբերում է մաքուր լայնությանը՝ առանց բռնաձողերի կամ այլ ելուստների հաշվարկի:

104. Հավելվածի 145-րդ կետում պետք է ավելացնել, որ ելքը պետք է լինի ուղղակի դեպի բաց տարածք կամ հրդեհային անվտանգության գոտի, ոչ թե դեպի փակ միջանցք: Կարևոր է նաև նշել, որ թեքահարթակի վերջում պետք է նախատեսել հորիզոնական հանգստի հարթակ առնվազն 1,5 × 1,5 մ:

105. Հավելվածի 146-րդ կետի պահանջը ճիշտ է, սակայն «վթարային լուսավորության դեպքում հակադրություն ≥ 0,7» չափանիշը պետք է հստակեցնել, որ հակադրությունը հաշվարկվում է պայծառության արժեքներով (L1-L2)/(L1+L2) բանաձևով: Նշումը պետք է լինի տեսողականորեն ընկալելի նաև գունային կուրություն ունեցող անձանց համար:

106. Հավելվածի 148-րդ կետում պետք է ավելի հստակ տարբերակել «հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի հարկ» և «հրդեհային անվտանգության գոտի» հասկացությունները: Բացի այդ, առաջարկվում է ավելացնել, որ յուրաքանչյուր հրդեհային գոտում պետք է ապահովվի լսողական և տեսողական ազդարարում, գոտին պետք է ունենա օդափոխման անկախ համակարգ և հերմետիկ դռներ, հրդեհային գոտիների միջև տեղաշարժի ուղղությունները պետք է նշված լինեն շոշափելի պիկտոգրամներով:

107. Հավելվածի 151-րդ կետում առաջարկվում է հստակեցնել, որ հաշվարկում պետք է ներառվի ոչ միայն ֆիզիկապես տարհանվող անձանց թիվը, այլ նաև ուղեկցողների միջին թիվը:

108. Հավելվածի 155-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ հակադիր գույնը պետք է ապահովի առնվազն 70% պայծառության հակադրություն (contrast ratio ≥ 0.7), իսկ լուսաֆլյուորեսցենտային շերտերը պետք է լինեն մշտապես տեսանելի նաև վթարային լուսավորության դեպքում: Առաջարկվում է հավելել, որ շերտերի լայնությունը պետք է լինի առնվազն 5 սմ՝ ապահովելու տեսանելիությունը վերևից և ներքևից:

109. Հավելվածի 156-րդ կետն անհրաժեշտ է ավելացնել, որ արտաքին սանդուղքները պետք է ունենան չսահող մակերևույթ, ծածկ կամ պաշտպանիչ հովանոց՝ ձյան և անձրևի դեպքում օգտագործման համար, ինչպես նաև լուսավորություն առնվազն 100 լյուքս մակարդակով: Առաջարկում ենք ավելացնել նաև, որ բռնաձողերը պետք է լինեն երկկողմանի և անընդհատ:

110. Հավելվածի 157-րդ կետն անհրաժեշտ է հստակեցնել, որ հեռակառավարման համակարգը պետք է լինի մատչելի և ինտուիտիվ, օրինակ՝ կոճակների բարձրությունը 0.8–1.2 մ միջակայքում, իսկ կառավարման վահանակը՝ նշված բրայլյան համակարգով և ռելիեֆային պատկերակներով: Առաջարկում ենք ավելացնել նաև, որ ձեռքով փակման մեխանիզմը պետք է լինի հեշտ շահագործվող և պահանջի ոչ շատ ուժ:

111. Հավելվածի 158-րդ կետում անհրաժեշտ է ընդգծել, որ լուսավորությունը պետք է լինի հաճախականությամբ կայուն և չպարունակի փայլ կամ կտրուկ անցումներ:

112. Հավելվածի159-րդ կետի 1-ին ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել, որ 5% համամասնությունը պետք է կիրառվի ոչ թե ամբողջ բնակչության նկատմամբ, այլ այն խմբի, որի համար նախատեսված է տվյալ թաքստոցը:

113. Հավելվածի159-րդ կետի 2-րդ ենթակետում նհրաժեշտ է նաև սահմանել, որ մահճակալների միջև հեռավորությունը պետք է լինի առնվազն 1.2 մ, որպեսզի ապահովվի անվասայլակով մուտք և բժշկական միջամտության հնարավորություն:

114. Հավելվածի159-րդ կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է ավելացնել, որ արտաքին կանչող սարքերը պետք է ապահովեն երկկողմանի խոսքային կամ տեսա-ձայնային կապ և տեղադրվեն 0.8–1.2 մ բարձրության վրա՝ բոլոր խմբերի համար հեշտ մատչելի լինելու նպատակով:

115. Հավելվածի 161-րդ կետում նշվում է, որ եթե սանիտարական հանգույցն ունի չորսից պակաս խցիկ, ապա մատչելի խցիկ նախատեսելը պարտադիր չէ: Սա վտանգավոր է, քանի որ փոքր հանրային օբյեկտներում (օր.՝ սրճարաններ, գրասենյակներ) հենց այդ խցիկների բացակայությունն է դարձնում միջավայրն անմատչելի: Պետք է հստակեցվի, որ առնվազն մեկ համապիտանի խցիկ պարտադիր է բոլոր շենքերում, անկախ ընդհանուր խցիկների թվից:

116. Հավելվածի 162-րդ կետը թույլ է տալիս համապիտանի խցիկը տեղակայել մինչև 40 մ հեռավորության վրա, ինչը կարող է չափազանց հեռու լինել տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար: Հիմնական օբյեկտներում առաջարկում ենք սահմանել առավելագույնը 25 մ հեռավորություն:

117. Հավելվածի 166-րդ կետում տրամագծով 1.4 մ շրջադարձային տարածքը նվազագույն չափն է, բայց այն դժվարացնում է մանևրը շատ տեսակների անվասայլակներով: Պետք է սահմանել առնվազն 1.5 մ տրամագիծ:

118. Հավելվածի 167-րդ կետը չի հստակեցնում բռնակների քանակն ու դասավորությունը:

119. Հավելվածի 172-րդ կետի վերակառուցման դեպքում սահմանված նվազագույն չափը՝ 1.5 × 1.5 մ, չափազանց փոքր է՝ հաշվի առնելով կողային մանևրի և ուղեկցողի հնարավորությունը: Պետք է հստակեցվի, որ այս չափը կիրառելի է միայն ծայրահեղ բացառիկ դեպքերում և միայն առանձին նախագիծ-հիմնավորմամբ:

120. Հավելվածի 173-րդ աղյուսակի (կետեր 3–4) համապիտանի խցիկների չափերը՝ 2.2×2.25 մ կամ 1.7×2.2 մ, բավարար չեն, եթե նախատեսվում է հանդերձարանային գոտի կամ ուղեկցող: Պետք է ապահովվի նվազագույնը 2.4×2.4 մ, ինչպես նշված է եվրոպական նորմերում:

121. Հավելվածի 178-րդ կետը թույլ չի տալիս առանձին ծորակներ տաք և սառը ջրի համար: Առաջարկում ենք նշել, որ առանձին ծորակներ կարելի է օգտագործել միայն ջերմակարգավորիչով կամ անվտանգության սահմանափակիչով:

122. Հավելվածի 179-րդ կետով բարձրության կարգավորվող սարքավորումների կիրառումը սահմանված է որպես «թույլատրվում է», ոչ թե «խորհուրդ է տրվում» կամ «նախընտրելի»: Նպատակահարմար է ձևակերպել՝ «նախապատվությունը տրվում է բարձրության կարգավորմամբ սարքավորումների կիրառմանը», որպեսզի խրախուսվի համընդհանուր ձևավորումը:

123. Հավելվածի 182-րդ կետով հակադրության նվազագույն գործակիցը սահմանված է 40%, իսկ նախազգուշացումների համար՝ 70%: Առաջարկվում է բարձրացնել նվազագույն հակադրությունը մինչև 50%, իսկ վտանգավոր կամ շարժական գոտիների համար՝ 80%:

124. Հավելվածի 183-րդ կետի կառավարման տարրերի տեղադրման բարձրությունը (0,85–1,1 մ) համապատասխանում է ստանդարտին, սակայն կողային պատից նվազագույն 0,6 մ հեռավորությունը փոքր է՝ հաշվի առնելով անվասայլակի շրջադարձի շառավիղը: Առաջարկվում է սահմանել առնվազն 0,7 մ՝ ապահովելու մանևրի ազատություն:

125. Հավելվածի 186-րդ կետում նշված է, որ բռնակները պետք է տեղադրվեն 0,8–1,1 մ բարձրության վրա, սակայն չի հստակեցվում բռնակի տեսակը: Որոշ դեպքերում (օր.՝ ավտոմատ սահող դռներ) բռնակների բացակայությունը կարող է դառնալ խոչընդոտ տեսողության խնդիր ունեցող անձանց համար, որոնք կողմնորոշվում են շոշափումով: Առաջարկում ենք ավելացնել պահանջ, որ բոլոր դռներն ունենան ֆիզիկապես շոշափելի բացման տարրեր, նույնիսկ ավտոմատ համակարգերի դեպքում:

126. Հավելվածի 187-րդ կետում նշվում է, որ ստացիոնար նստատեղերի առկայության դեպքում պետք է լինեն ազատ տարածքներ անվասայլակների համար, բայց չի սահմանվում դրանց քանակը և միջակայքը: Առաջարկվում է սահմանել առնվազն յուրաքանչյուր 10 նստատեղի համար մեկ ազատ տեղ անվասայլակի համար:

127. Հավելվածի 190-րդ կետի լիցքավորման կայանների ցուցադրման վահանակների բարձրությունը (1,45–1,75 մ) չափազանց բարձր է անվասայլակ օգտագործողների համար: Առաջարկում ենք վերանայել բարձրության միջակայքը՝ սահմանելով 0,9–1,35 մ:

128. Հավելվածի 191-րդ կետում նշվում է, որ առնվազն մեկ վառելիքի բաշխիչ սյունակ պետք է մատչելի լինի, սակայն չի նշվում մուտքի լայնության և կառավարման տարածքի ազատ չափերը:

129. Հավելվածի 193-րդ կետում տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սարքերի մասին պահանջը չափազանց ընդհանուր է: Չի նշվում՝ որտեղ է պարտադիր, և որտեղ «խորհուրդ է տրվում: Առաջարկում ենք հստակեցնել, որ նման սարքերը պարտադիր են՝ սպասարկման կետերում (բանկեր, գանձասենյակներ, տոմսարկղեր), զանգերի, ինֆո-տերմինալների և օգնության համակարգերում:

130. Հավելվածի 195-րդ կետում «խորհուրդ է տրվում» ձևակերպումը բավարար չէ: Սա կարևոր մատչելիության պահանջ է լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Առաջարկում ենք փոխարինել «խորհուրդ է տրվում» ձևակերպումը «պարտադիր է տեղադրել» բառերով՝ առնվազն հիմնական սպասարկման սենյակներում (օր.՝ սպասասրահներ, հիվանդանոցների ընդունարաններ, դատարանների դահլիճներ):

131. Հավելվածի 197-րդ կետը սահմանում է, որ կառավարման օրգանները պետք է հնարավոր լինի օգտագործել մեկ ձեռքով, սակայն բացակայում է ջանքերի առավելագույն սահմանը: Առաջարկում են սահմանել, որ թուլյատրելի ուժն է ≤22 Նմ:

132. Հավելվածի 202-րդ կետում մետաղորսիչների մոտ «արգելք սրտի խթանիչով անձանց անցման» ձևակերպումը կարող է լինել խտրական կամ անհասկանալի: Առաջարկում ենք փոխարինել «արգելք» բառը «անվտանգության նկատառում»-ով: Անհրաժեշտ է ներառել նաև կոխլեար իմպլանտ կրող անձանց անցման այլընտրանքային երթուղու ցուցումները: Առաջարկում ենք նշել նաև, որ անվտանգության համակարգերի և սարքավորումների նախագծման ժամանակ անհրաժեշտ է բացառել ուժեղ էլեկտրամագնիսական դաշտերի առաջացումն այն վայրերում, որտեղ հնարավոր է կոխլեար իմպլանտ ունեցող անձանց գտնվելը:

133. Հավելվածի 205–207-րդ կետերում տեղադրման բարձրությունների միջակայքը և պիտակների չափերը շատ ընդհանուր են: Առաջարկում ենք ներառել մոտիկից ընթերցվող ցուցանակների առանձին չափանիշներ:

134. Հավելվածի 212-րդ կետում գունային կոդավորումը միայն գույնով բավարար չէ գունաչափական խնդիրներ ունեցող անձանց համար: Առաջարկում ենք գույներին զուգահեռ սահմանել ձևերի կամ խորհրդագրերի հստակ տարբերակիչներ և ապահովել նույն տեղեկատվության կրկնօրինակում բարձր հակադրությամբ գրությամբ:

135. Հավելվածի 213-րդ կետում արտակարգ ազդարարման լուսա և ձայնային պարամետրերը նշված չեն հստակ թվային չափանիշներով. դա բարդացնում է համապատասխանության ստուգումը լսողության կամ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Առաջարկում ենք ավելացնել նվազագույն ձայնային մակարդակի և լույսի լյումենի կոնկրետ շեմեր, ինչպես նաև թարթման հաճախականության միջակայք, և պահանջել անխափան սնուցման աղբյուր:

136. Հավելվածի 214–216-րդ կետերում երկկողմ կապի համակարգերի պահանջը ողջունելի է, սակայն բացակայում է անխափան սնուցման պարտադիր պայմանը և կառավարման տարրերի մատչելիության հստակ բարձրությունները բոլոր դեպքերում: Առաջարկում ենք պարտադիր դարձնել անխափան սնուցում առնվազն 2 ժամով, կանչի կոճակների բարձրություն 0.8–1.1 մ, ձգվող լարերի ավարտ մինչև հատակ, ինչպես նաև տեսողական, ձայնային և թրթռացող հաստատման պարտադիր համադրություն:

137. Հավելվածի 219-րդ կետում ձայնային հստակության համակարգեր պահանջվում են, բայց չեն նշվում ֆոնային աղմուկի սահմանաչափեր և խոսքի հասկանալիության չափորոշիչներ: Առաջարկում ենք սահմանել ֆոնային աղմուկի առավելագույն մակարդակ սպասասրահներում և դահլիճներում, ինչպես նաև խոսքի փոխանցման ինդեքսի նվազագույն շեմ:

138. Հավելվածի 220-րդ կետով ուղղորդող շոշափողական հատակը թողնված է նախագծման առաջադրանքի հայեցողությանը, ինչը ռիսկ է ստեղծում մեծ տարածքներում: Առաջարկում ենք դարձնել պարտադիր, որ եթե հիմնական անվտանգ երթուղին 4 մ-ից լայն է կամ 70 մ-ից երկար, ապա ուղղորդող շոշափողական նշագրումը պարտադիր է:

139. Հավելվածի 223-րդ կետով ինդուկցիոն համակարգերը «խորհուրդ են տրվում», ոչ թե պարտադիր են, մինչդեռ դրանք առանցքային են լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Առաջարկում ենք դարձնել պարտադիր ընդունելության կետերում, սպասասրահներում, դահլիճներում և դատական-վարչական սպասարկման գոտիներում, իսկ մնացած վայրերում՝ առնվազն շարժական լուծումների միջոցով:

140. Հավելվածի 226-րդ կետով հանրային հեռախոսների 25 տոկոսի պահանջը ժամանակավրեպ է: Առաջարկում ենք շեշտադրումը տեղափոխել հաճախորդների սպասարկման սեղանների, ինտերկոմների և տեղեկատուների վրա՝ ձայնի կարգավորմամբ և տեքստային հաղորդակցության հնարավորությամբ, իսկ հեռախոսների դեպքում պահել «առնվազն մեկը» տրամաբանությունը միայն առկայության դեպքում:

141. Հավելվածի 229–230-րդ կետերում շոշափողական և Բրայլի ցուցանակների բարձրությունները տրված են, բայց չի հստակեցվում շոշափողական ռելիեֆի նվազագույն բարձրությունը, եզրերի սուր մասերի արգելքը և հակադրության շեմն ընթեռնելիության համար:

142. Հավելվածի 233-րդ կետում առաջարկվում է ավելացնել, որ մատչելի համարները պետք է տեղակայվեն նույն հարկում, որտեղ գտնվում են մատչելի մուտքերն ու ընդհանուր տարածքները՝ խուսափելու համար այն իրավիճակներից, երբ մատչելի համար կա, բայց այն մատչելի չէ առանց վերելակի:

143. Հավելվածի 234-րդ կետում առաջարկվում է ավելացնել, որ մահճակալների և պահարանների տեղադրությունը պետք է ապահովի անվասայլակով լիարժեք մանևրելու հնարավորություն և դռների ազատ բացում:

144. Հավելվածի 236-րդ կետում առաջարկվում է հստակեցնել, որ բակային տարածքներում պետք է նախատեսվեն նաև հանգստի նստարաններ, ստվերային գոտիներ և խաղահրապարակների տարրեր, որոնք համապատասխանում են տարբեր կարողություններ ունեցող երեխաների և չափահասների կարիքներին:

145. Հավելվածի 238-րդ կետում անհրաժեշտ է վերանայել պատշգամբների շեմի առավելագույն բարձրության պահանջը, քանի որ նշված 1,4 սմ արժեքը, ամենայն հավանականությամբ, պարունակում է տպագրական սխալ: Ըստ միջազգային ստանդարտների (օր.՝ ISO 21542 և ADA Standards), շեմի առավելագույն բարձրությունը պետք է լինի ոչ ավելի, քան 20 մմ, իսկ նոր շենքերի դեպքում՝ մինչև 12–14 մմ: Ուստի առաջարկվում է հստակեցնել խմբագրությունը. «Շեմի բարձրությունը պետք է լինի ոչ ավելի, քան 1,4 սմ (14 մմ)»:

146. Հավելվածի 242-րդ կետում առաջարկվում է ավելացնել, որ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված ազդանշանային համակարգերը պետք է ունենան տեսողական ազդանշաններ (լույսի ձևով), իսկ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար՝ ձայնային կամ թրթռացող ազդանշաններ:

147. Սոցիալական օգտագործման բնակֆոնդի տների ստանդարտներն անհրաժեշտ է համապատասխանեցնել կոնվենցիայի 19-րդ հոդվածին:

148. Հավելվածի 265-րդ կետում նպատակահարմար է լրացնել, որ հաշվարկային թվի ընդունման ժամանակ պետք է դիտարկվի ոչ միայն նախագծման առաջադրանքով նախատեսված միջին ցուցանիշը, այլ նաև տվյալ շենքի կամ կառույցի ֆունկցիոնալ նշանակությունը և սպասարկվող անձանց հոսքը: Օրինակ՝ բժշկական, կրթական, մշակութային և վարչական շենքերի համար պետք է սահմանվեն բարձրացված հարաբերակցություններ՝ հաշվի առնելով հաճախելիության առանձնահատկությունները:

149. Հավելվածի 266–267-րդ կետերում մարդկանց խմբերով տոկոսային դասակարգումը խնդրահարույց է, քանի որ այն խտրական է և չի արտացոլում իրական անհատական տարբերությունները:

150. Հավելվածի 274-րդ կետում նախատեսված է խիստ խնդրահարույց մոտեցում, քանի որ այն կրկին մարդկանց բաժանում է շարժունակության խմբերի՝ U2–U4 տոկոսային հաշվարկով, ինչը հակասում է համընդհանուր դիզայնի սկզբունքներին:

151. Հավելվածի 278-րդ կետում անհրաժեշտ է բացառել հաշմանդամություն ունեցող սովորողների դասակարգումն «ըստ խախտումների տեսակների»՝ փոխարենը կիրառելով կարիքների վրա հիմնված նախագծային մոտեցում, քանի որ

խախտումների հիմքով բաժանումը խտրական է և հակասում է ներառական կրթության սկզբունքներին:

152. Հավելվածի 281-րդ կետում խորհուրդ է տրվում հստակեցնել, որ դասարանում նախատեսվող 1–2 տեղերը չպետք է դիտվեն որպես առավելագույն սահման, այլ որպես նվազագույն՝ կախված սովորողների անհատական կարիքներից և դասարանի ընդհանուր տարածքային հնարավորություններից:

153. Հավելվածի 282-րդ կետում նախատեսված ձևակերպումը, ըստ որի որոշ ուսումնական առարկաներ կարող են համարվել «անհամատեղելի» հաշմանդամություն ունեցող սովորողների մասնակցության հետ, խիստ խնդրահարույց է և խտրական: Անհրաժեշտ է բացառել չափազանց խտրական ձևակերպումներից:

154. Հավելվածի 284-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ մեկ հենաշարժական խնդիր ունեցող երեխայի համար նախատեսված տեղը չի կարող դիտվել բավարար, այլ պետք է ապահովվի ծրագրային մատչելիություն և պայմաններ՝ կախված երեխաների իրական թվից և կարիքներից:

155. Հավելվածի 285-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ նստատեղերի դասավորությունը պետք է որոշվի ոչ թե խմբային հատկանիշներով, այլ անհատական կարիքների և հարմարեցված սարքավորումների առկայությամբ:

156. Հավելվածի 286-րդ կետում անհրաժեշտ է ապահովել հղում համընդհանուր դիզայնի սկզբունքին՝ ընդգծելով, որ բոլոր չափերը պետք է դիտվեն որպես նվազագույն, և նախագծողները պարտավոր են հաշվի առնել տարբեր սարքավորումների և օգնող միջոցների կիրառման պահանջները:

157. Հավելվածի 291-րդ կետում անհրաժեշտ է լրացնել, որ նման լուսային ազդանշանները պետք է լինեն ոչ միայն լսողության խնդիրներ ունեցող սովորողների համար, այլ նաև տեսողական ազդանշաններին զուգահեռ՝ ձայնային ազդանշաններով բազմաալիք ծանուցման համակարգեր ապահովելու նպատակով:

158. Հավելվածի 292-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ ավտոմատ սահող դռների արգելքը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ դրանք կարող են վտանգավոր լինել երեխաների ինքնուրույն տեղաշարժման համար, իսկ այլ դեպքերում պետք է ապահովվի անվտանգ և մատչելի ավտոմատ կառավարման տարբերակ:

159. Հավելվածի 296-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ բժշկատեխնոլոգիական պահանջների սահմանումը չի կարող հակասել մատչելիության և խելամիտ հարմարեցման սկզբունքներին, որպեսզի նախագծման առաջադրանքը չդառնա բացառման գործիք:

160. Հավելվածի 297-րդ կետում նպատակահարմար է ավելացնել, որ 10% մեքենատեղերի պահանջը պետք է դիտվի որպես նվազագույն չափանիշ և վերանայվի ըստ սպասարկվող անձանց միջին թվաքանակի ու ծառայության բնույթի՝ հատկապես վերականգնողական կենտրոնների համար:

161. Հավելվածի 298-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ տեղեկատվական միջոցները պետք է ներառեն բազմալիք հաղորդակցության համակարգեր (տեսողական, ձայնային և շոշափելի)՝ ապահովելով մատչելիություն նաև համակցված խնդիրներ ունեցող անձանց համար:

162. Հավելվածի 300-րդ կետում առաջարկում ենք նշել, որ հանգստի հարթակները պետք է ունենան նստարաններ տարբեր բարձրությունների վրա և լինեն կիսաածածկ՝ արեգակի և անձրևի ազդեցությունից պաշտպանելու համար:

163. Հավելվածի 302-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ դրսից անմիջական մուտքը պետք է ապահովվի ոչ միայն ֆիզիկական մատչելիությամբ, այլ նաև հստակ նշագրումով և հակադրվող գունային լուծումներով՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար:

164. Հավելվածի 303-րդ կետում առաջարկում ենք ավելացնել պահանջ, որ այդ սանիտարահիգիենիկ տարածքներում պետք է ապահովվեն օգնության կանչի համակարգեր և արտակարգ իրավիճակների դեպքում շփման ուղիներ՝ ներառյալ տեսա/ձայնային ազդանշաններ:

165. Հավելվածի 304-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ բժշկական կաբինետների չափերը պետք է նախատեսեն նաև ուղեկցողի ներկայության հնարավորությունն՝ առանց մանևրի սահմանափակման:

166. Հավելվածի 305-րդ կետում անհրաժեշտ է նշել, որ տեղափոխման միջոցները պետք է լինեն մեխանիկական կամ էլեկտրական բարձրացնող սարքեր՝ անվտանգության սերտիֆիկացումով և անձնակազմի համապատասխան ուսուցմամբ:

167. Հավելվածի 307-րդ կետում անհրաժեշտ է ամրագրել, որ տեղեկատվական և ձայնային համակարգերը պետք է միաժամանակ մատչելի լինեն լսողության, տեսողության և խոսքի խնդիրներ ունեցող անձանց համար՝ ներառյալ ժեստերի լեզվի ծառայությունների մատչելիությունը:

168. Հավելվածի 308-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ դեղատների ցուցադարակների մատչելի հատվածները պետք է ընդգծվեն գունային հակադրությամբ և ունենան մատչելի նշագրում՝ Բրայլի համակարգով և խոշոր տառատեսակներով:

169. Հավելվածի 309-րդ կետում նպատակահարմար է ավելացնել, որ առևտրային սրահների նախագծման և կահավորման ժամանակ պետք է պարտադիր

ներառվի համընդհանուր ձևավորման սկզբունքը, որպեսզի ինքնուրույն սպասարկման հնարավորությունը չսահմանափակվի միայն որոշակի խնդիրներ ունեցող անձանց խմբերով:

170. Հավելվածի 310-րդ կետում անհրաժեշտ է նշել, որ չափային ցուցանիշները պետք է դիտվեն ոչ թե որպես սահմանային նորմեր, այլ որպես նվազագույն մատչելիության պահանջներ՝ թույլ տալով նախագծային ճկունություն տարբեր տեսակի սրահների դեպքում:

171. Հավելվածի 311-րդ կետում առաջարկում ենք հստակեցնել, որ անցումների լայնությունը պետք է ապահովի ոչ միայն անվասայլակի շրջադարձը, այլ նաև ուղեկցողի կողքով շարժվելու հնարավորություն՝ հաշվի առնելով հաճախորդների հոսքը և տրոլեյների առկայությունը:

172. Հավելվածի 312-րդ կետում նպատակահարմար է ավելացնել, որ մատչելի հաշվարկա-դրամարկղային կետում պետք է ապահովվի նաև ձայնային հաղորդակցման միջոց կամ էլեկտրոնային տեքստային ինտերֆեյս՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար:

173. Հավելվածի 313-րդ կետում անհրաժեշտ է ընդգծել, որ շոշափողական և լուսային ցուցանակները պետք է ունենան պարզ, ստանդարտացված պատկերագրեր:

174. Հավելվածի 314-րդ կետում նպատակահարմար է հստակեցնել, որ գունային հակադրությունը պետք է համապատասխանի նվազագույն 70% կոնտրաստի ցուցանիշին՝ տեսողական մատչելիության ապահովման համար:

175. Հավելվածի 315-րդ կետում առաջարկվում է սահմանել, որ մնեմոսխեմաները պետք է տեղադրվեն մուտքերի մոտ, ունենան Բրայլի գրություն և ձայնային ուղեցույցի ակտիվացման հնարավորություն՝ QR կամ NFC համակարգի միջոցով:

176. Հավելվածի 316-րդ կետում անհրաժեշտ է ավելացնել, որ կայանատեղերի նախագծման ժամանակ պետք է ապահովվի ուղիղ և անարգել երթուղի դեպի շենքի մուտք, ինչպես նաև նշագրում գիշերային լուսավորությամբ:

177. Հավելվածի 317-րդ կետում նպատակահարմար է հստակեցնել, որ «հատուկ տարածքներ, գոտիներ կամ բլոկներ» ձևակերպումը չպետք է հանգեցնի խտրական տարանջատման. պետք է ապահովվի հավասար մուտք և մատչելիություն նույն ծառայությունների համար:

178. Հավելվածի 319-րդ կետում նպատակահարմար է հստակեցնել, որ 3 մ² մակերեսը պետք է ներառի նաև անվասայլակի շրջադարձի հնարավորությունը՝ առնվազն 1,5 մ տրամագծով շրջանաձև ազատ գոտի ապահովելով:

179. Հավելվածի 320-րդ կետում անհրաժեշտ է վերանայել U2–U4 խմբերի հաշվարկային մոտեցումը, քանի որ մարդկանց խմբերով դասակարգումը խտրական բնույթ ունի և հակասում է համընդհանուր ձևավորման սկզբունքներին:

180. Հավելվածի 321-րդ կետում առաջարկվում է հավելել, որ կահավորանքը պետք է լինի փոփոխելի (modular)՝ թույլ տալու տարածքի ճկուն հարմարեցում տարբեր կարիքների դեպքում, ինչպես նաև ապահովվի սեղանների միջև տեսողական կոնտրաստ:

181. Հավելվածի 322-րդ կետում նպատակահարմար է նշել, որ սպասարկման օգնությունը պետք է իրականացվի հաճախորդի ընտրությամբ՝ անկախության սկզբունքի պահպանմամբ:

182. Հավելվածի 324-րդ կետում խորհուրդ է տրվում նշված լայնությունը դիտարկել որպես նվազագույն ցուցանիշ, ապահովելով նաև ուղեկցողի կամ սպասարկողի անցանելիությունը:

183. Հավելվածի 325-րդ կետում նպատակահարմար է հստակեցնել, որ սեղանի մոտ պետք է ապահովվի անվասայլակի մոտենալու ազատ տարածք՝ առնվազն 0,8 մ խորությամբ:

184. Հավելվածի 326-րդ կետում առաջարկում ենք ավելացնել, որ սեղանների դասավորությունը պետք է թույլ տա անվասայլակով անցնել առանց շրջանցման՝ ապահովելով ուղիղ երթուղիներ դեպի ելքեր:

185. Հավելվածի 327-րդ կետում առաջարկվում է նշել, որ բարի սեղանի այս հատվածը պետք է հստակ նշագրվի համընդհանուր մատչելիության խորհրդանիշով և ապահովվի նաև լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված հաղորդակցման հնարավորություն:

186. Հավելվածի 328-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ 5% ցուցանիշը պետք է կիրառվի ոչ միայն հիմնական դահլիճում, այլ նաև բացօթյա սրահներում և սպասասրահներում:

187. Հավելվածի 329-րդ կետում նպատակահարմար է հավելել, որ ճաշացանկը պետք է հասանելի լինի առնվազն երկու ձևաչափով՝ մեծ տառերով տպագիր և թվային ձայնային տարբերակով, օրինակ, QR կոդի միջոցով:

188. Հավելվածի 330-րդ կետում առաջարկում ենք ընդգծել, որ օժանդակ տարածքներում (հատկապես զուգարաններում) պետք է ապահովվի միասնական մատչելի երթուղի առանց շեմերի կամ մակարդակների տարբերության:

189. Հավելվածի 331-րդ կետում նպատակահարմար է հստակեցնել, որ տեղեկատվությունը պետք է տրամադրվի նաև մատչելի թվային տարբերակով՝ վեբ կայքի կամ բջջային հավելվածի միջոցով, հետևելով WCAG 2.2 չափանիշներին:

190. Հավելվածի 332-րդ կետում առաջարկվում է ավելացնել, որ ինտերիերի տեղեկատվական միջոցների ձևավորումը պետք է համադրվի մատչելիության խորհրդանիշների ստանդարտացված կիրառման հետ՝ ապահովելով համընդհանուր ճանաչելիություն:

191. Հավելվածի 333-րդ կետում սահմանվել է մարդկանց դասակարգում ըստ շարժունակության խմբերի՝ U2–U4, ինչը խնդրահարույց է, քանի որ դա հանգեցնում է անհատների պիտակավորման՝ ըստ ֆունկցիոնալ սահմանափակման, այլ ոչ թե մատչելիության համընդհանուր ապահովման մոտեցման:

192. Հավելվածի 349-րդ կետում՝ թույլատրվում է չտեղադրել բարձրիչներ որոշ կայարաններում, եթե 50 կմ շառավղով կա մատչելի կայարան, ինչը խախտում է մատչելիության իրավունքի տարածքային հավասարության սկզբունքը:

193. Հավելվածի 351-րդ կետում՝ մատչելի անցումը սահմանվում է «առնվազն մեկ» մակարդակով՝ անկախ տուրնիկետների ընդհանուր քանակից, ինչը բավարար չէ իրական մատչելիություն ապահովելու համար:

194. Հավելվածի 404-րդ կետի՝ կրոնական թափորների երթուղիների չհատման պահանջն իրատեսական չէ և կարող է հանգեցնել ֆիզիկական տարանջատման կամ առանձնացման՝ օրինակ՝ եթե հաշմանդամություն ունեցող հավատացյալներին ուղղորդեն այլ մուտքով: Փոխարենը պետք է ամրագրվի պահանջ, որ թափորների երթուղիները նույնպես պետք է մատչելի լինեն:

195. Հավելվածի 410-րդ կետն անհրաժեշտ է վերանայել, ըստ որի ընդունելության և կոլեկտիվ օգտագործման սենյակները պետք է տեղակայվեն միայն առաջին և երկրորդ հարկերում: Նման սահմանափակումը գործնականում անարդյունավետ է բազմահարկ կամ պատմական շենքերում, որտեղ տեխնիկական միջոցներով կարելի է ապահովել լիարժեք մատչելիություն ցանկացած հարկում: Պետք է շեշտել ոչ թե հարկային սահմանափակումը, այլ իրական ֆունկցիոնալ մատչելիության ապահովումը վերելակներով և հարմարեցված երթուղիներով:

196. Հավելվածի 411-րդ կետը ձևակերպված է մանրամասն, սակայն պարունակում է մի շարք լուրջ թերություններ, որոնք կարող են խոչընդոտել դատական համակարգի ամբողջական մատչելիությանը՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հաղորդակցական և գործընթացային իմաստով: Առաջին հերթին, կետը վերաբերում է միայն ֆիզիկական մատչելիությանը՝ դահլիճ մուտք գործելու, նստելու և որոշակի գոտիներում տեղ ունենալու հնարավորությանը: Այն բացակայում է հաղորդակցական մատչելիության բաղադրիչը, որը ներառում է պարզ լեզվի նյութեր, դատական նյութերի մատչելի ձևաչափեր (օրինակ՝ մեծատառ տպագիր, բրայլ, տեսանյութ ենթագրերով), ինչպես նաև տեխնիկական սարքավորումներ լսողության կամ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Երկրորդ՝ նշվում է, որ դահլիճում պետք է լինի ժեստերի լեզվի թարգմանիչների համար նախատեսված տեղ: Սակայն չի հստակեցվում, որ այդ տեղը պետք է ապահովի

տեսադաշտ և ուղղակի տեսանելիություն դատավարության բոլոր մասնակիցների՝ դատավորի, փաստաբանի և վկայի նկատմամբ: Առանց դրա ապահովման ժեստերի լեզվի թարգմանությունը դառնում է անարդյունավետ: Երրորդ՝ ըստ պահանջի, նախատեսվում է տեղ «անվասայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող երդվյալ ատենակալների համար»: Սակայն ՀՀ-ում ատենակալների ինստիտուտը գործնականում չի կիրառվում, և այս ձևակերպումն ակնհայտորեն վերցված է ռուսական նորմերից՝ առանց համահունչ տեղայնացման: Պետք է վերաձևակերպել՝ «դատավարության բոլոր մասնակիցների (ներառյալ փաստաբանների, հայցվորների, պատասխանողների, վկաների և դիտորդների) համար՝ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության հավասար պայմաններ ապահովելու նպատակով»: Չորրորդ՝ նախատեսվում է միայն «ֆիզիկական հասանելիություն ամբիոնին և կողմերի նստարաններին», սակայն չի սահմանվում օրինակ՝ ձայնի ուժեղացուցիչ համակարգեր լսողության խնդիրներ ունեցող անձանց համար, կամ տեսաձայնային կապի հնարավորություն հեռավար մասնակցության դեպքում: Հինգերորդ՝ չկա դրույթ դատական դահլիճների նախագծման ժամանակ հարմարեցված տարհանման կամ անվտանգության գոտիների համար: Վեցերորդ՝ կետը պահանջում է, որ կալանավորված անձանց խցերից առնվազն մեկը լինի մատչելի անվասայլակ օգտագործող անձանց համար, սակայն չի անդրադառնում շփման կամ տեսակցությունների մատչելիությանը, մասնավորապես՝ թափանցիկ բաժանարարների բարձրությանը, խոսքի հստակ ընկալման և լսողական սարքերի օգտագործման հնարավորությանը:

197. Հավելվածի 412-րդ կետն նհատական ընդունելության սենյակի մակերեսի ֆիքսված նորմը՝ «առնվազն 12 մ²», չափազանց մեծ է փոքր համայնքների կամ սոցիալական սպասարկման գրասենյակների համար: Այս չափորոշիչը չի տարբերակում սպասարկման բնույթը (օրինակ՝ իրավաբանական խորհրդատվություն ընդդեմ վարչական ընդունելության) և կարող է առաջացնել ավելորդ ֆինանսական բեռ՝ առանց մատչելիության բարելավման:

198. Հավելվածի 413-րդ կետի բարձրախոսային կապի և ձայնային տեղեկատվության համակարգի պահանջը չի ընդգրկում տեսողական կամ խոսքային ընկալման այլընտրանքային ձևերը (օրինակ՝ էկրանի տեքստային հաղորդագրություններ կամ վիզուալ ցուցիչներ): Այս կետը պետք է ընդլայնվի՝ ներառելով բազմաալիքային հաղորդակցման սկզբունքը:

199. Հավելվածի 414-րդ կետովբԲանկային հիմնարկների մատչելիության պահանջները սահմանված են ընդհանուր ձևով՝ առանց հաշվի առնելու հաճախորդների մեծ հոսքի և սպասարկման ավտոմատացված համակարգերի առանձնահատկությունները: Պետք է հստակեցվի, որ ինքնասպասարկման տերմինալները, բանկոմատները և առցանց սպասարկման կետերը նույնպես պետք է լինեն ֆիզիկապես և հաղորդակցականորեն մատչելի:

200. Հավելվածի 415-րդ կետի սպասարկման հարմարեցված աշխատատեղերի պահանջը չպետք է սահմանափակվի միայն մեկով, քանի որ բանկերում հաճախ ձևավորվում են հերթեր կամ միաժամանակյա սպասարկման իրավիճակներ: Պետք է նախատեսել առնվազն 5%-ի մատչելիություն բոլոր սպասարկման կայանների հաշվարկով՝ ապահովելով հավասար սպասարկման հնարավորություններ:

201. Հավելվածի 416-րդ կետի Հիփոթեքային և վարկային կազմակերպությունների համար սանիտարահիգիենիկ տարածքի պահանջը պետք է հստակեցվի, որ այն պետք է լինի նույն հարկում, որտեղ սպասարկվում են այցելուները, այլ ոչ թե ընդհանուր օգտագործման մեկ այլ հարկում: Հակառակ դեպքում պահանջը կարող է ձևականորեն բավարարվել՝ առանց գործնական մատչելիության:

202. Հավելվածի 439-րդ կետում նշվում է, որ «կույրերի և տեսողության խնդիրներ ունեցողների աշխատատեղերը պետք է լինեն պարզ հատակագծմամբ» և լվացարաններով: Ձևակերպումը պահպանում է բժշկական և խնամքի մոտեցումը, որի համաձայն կույր անձը պետք է աշխատի առանձին տարածքում: Փոխարենը պետք է ամրագրվի համընդհանուր ձևավորման սկզբունքը՝ ապահովելով նույն տարածքում հավասար աշխատանքի հնարավորություն՝ համապատասխան հարմարեցումներով, ոչ թե ֆիզիկական տարանջատումով:

203. Հավելվածի 440-րդ կետի «Ինտելեկտի նվազում ունեցող անձ» եզրույթը չի համապատասխանում մարդու իրավունքների մոտեցմանը: Բացի այդ, պահանջը, որ այդ տարածքները պետք է տեղադրել երկրորդ հարկից ոչ բարձր, կարծրատիպային է, կարծես այդ անձինք չեն կարող կողմնորոշվել կամ մուտք գործել վերևի հարկեր: Եթե շենքը մատչելի է վերելակով, հարկային սահմանափակումը խտրական է և անիիմն: Բացի այդ, կանանց և տղամարդկանց սանիտարական տարածքների հարակից տեղադրումն արգելելը նույնպես անհասկանալի է, եթե չկա հստակ հիգիենիկ կամ անվտանգության հիմնավորում:

204. Հավելվածի 443-րդ կետի սրտանոթային խնդիրներ ունեցող անձանց համար տարածքների կողմնորոշման պահանջն անիրագործելի է մեծ մասշտաբի շենքերի դեպքում և չի բխում մատչելիության սկզբունքներից: Արևապաշտպանության պահանջը կարող է ձևակերպվել որպես ընդհանուր կանոն բոլորի հարմարավետ միջավայր ապահովելու համար, ոչ թե հատուկ «սրտանոթային խնդիրներ ունեցողների» համար:

205. Հավելվածի 446-րդ կետի «Տարածքների գունային կոդավորումը» պետք է հնարավոր լինի անկախ մարդկանց թվից: Բացի այդ, առկա է ռիսկ, քանի որ տարբեր խումբ մարդկիկ գույների տարբեր ընկալում ունեն, հետևաբար անհրաժեշտ է սահմանել գույնի կոնտրաստի և լուսավորության նվազագույն ցուցանիշներ, ոչ թե պարզապես խորհուրդ տալ գունավորել: «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող

անձանց համար պետք է ընտրել հանգիստ երանգներ» ձևակերպումը կարծրատիպերի վրա է հիմնված, չի բխում համընդհանուր դիզայնի սկզբունքներից:

206. Հավելվածի 448 կետում խնդրահարույց է «կույրերի և ոչ կույրերի համար հանդերձարանների հստակ բաժանումը» ձևակերպումը: Այս ձևակերպումը խարանի վրա է հիմնված և խտրական է, քանի որ տարբերակում է ըստ տեսողության, փոխարենը պետք է խոսվի միասնական տարածքի՝ հարմարեցված տարբեր կարիքների համար:

207. Հավելվածի 451-րդ կետում առկա է խնդիր՝ անձանց խմբային դասակարգման հետ կապված: Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը հանգստի սենյակում կապելն առողջական վիճակի կամ խնդիրների տեսակին («նյարդահոգեբանական խնդիրներ ունեցողներ», «հիպերտոնիկներ»)՝ ոչ միայն հին բժշկական մոտեցում է, այլև հակասում է մարդու իրավունքների վրա հիմնված մոդելին:

208. Հավելվածի 455-րդ կետում նախատեսվում է պառկելու տեղ առողջության վատթարացման ռիսկ ունեցողների համար, ինչը դրական է, բայց ձևակերպումը չափազանց անորոշ է: Անհրաժեշտ է հստակեցնել ով և ինչպես է գնահատում «վատթարացման ռիսկը», որպեսզի չհանգեցնի կամայական կիրառության կամ չհանգեցնի որոշ անձանց բացառմանը:

209. Հավելվածի 13.3.3. բաժնի անվանումը, ինչպես հավելվածի այլ հատվածներ, հիմնված է հնացած մոտեցումների վրա: Չկան աշխատատեղեր, որոնք նախագծվում են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Բոլոր աշխատատեղերում կարող են լինել նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

210. Հավելվածի 457 կետում նշվում է, որ հաշմանդամություն ունեցող անձի աշխատատեղը պետք է ապահովի անվտանգություն և հնարավորություն՝ աշխատելու տարբեր ծանրաբեռնվածությամբ: Սակայն այստեղ բացակայում է մատչելիության իրավունքի և խելամիտ հարմարեցման իրավական հղումը, որը պետք է հստակ կապվի ոչ միայն նախագծային, այլև աշխատանքային իրավունքի և գործատուի պարտականությունների հետ: Նմանատիպ խնդիր է, որ «տեսահսկման համակարգերի տեղադրման թույլտվությունը» կարող է հակասել անձնական տվյալների պաշտպանության և աշխատանքի անվտանգության սկզբունքներին, եթե այն չի հիմնավորվում իրավաչափ նպատակով և համաձայնությամբ:

211. Հավելվածի 458-րդ կետով պետք է ամրագրել աշխատանքային գոտու նախագծման ժամանակ անհրաժեշտ է ոչ միայն ֆիզիկական էրգոնոմիկա, այլև միջավայրային գործոնների (լույսի, ձայնի, ջերմաստիճանի, հոտերի և սենսորային գերծանրաբեռնվածության) գնահատում: Առանց դրա աշխատավայրի մատչելիությունը մնում է ձևական:

212. Հավելվածի 459-րդ կետում նշվում է, որ սարքավորումների դասավորությունը պետք է հաշվի առնի տարբեր խմբերի կարիքները: Սակայն այստեղ նշվում են միայն անվասայլակ օգտագործող և կույր անձինք, մինչդեռ այլ խմբեր չեն ընդգրկվում: Աշխատավայրի հարմարեցումը կամ մատչելիության ապահավումը պետք է լինի ֆունկցիոնալության տեսանկյունից:

213. Հավելվածի 460 կետում բացակայում է աշխատավայրի ինքնուրույն հարմարեցման սկզբունքը, այսինքն՝ աշխատողը պետք է կարողանա ինքնուրույն հարմարեցնել սարքավորումն առանց տեխնիկական անձնակազմի օգնության: Բացի այդ, չի նշվում, որ նման կահույքը պետք է ունենա նաև համապատասխան վկայագիր կամ սերտիֆիկացում՝ աշխատանքի անվտանգության պահանջներին համապատասխան:

214. Հավելվածի 461-րդ կետում բացակայում է հստակ պարտադիր պահանջ՝ անհատական կարիքների նախնական գնահատման մեխանիզմի վերաբերյալ: Առանց այդ գնահատման անհնար է որոշել՝ որ սարքավորումները կամ օգնական տեխնոլոգիաներն են անհրաժեշտ տվյալ անձի համար: Այս կետը պետք է հստակեցվի՝ պարտադիր դարձնելով անհատական գնահատումը և դրա արդյունքների հիման վրա տեխնիկական հարմարեցման պարտավորությունը:

215. Հավելվածում չկան շենքերի մուտքի և ներքին հաղորդակցության համակարգերի մասին դրույթներ: Մասնավորապես՝ որևէ դրույթ չի նշում դոմոֆոնների բարձրության, ձայնային ազդանշանի, վիզուալ ցուցիչների կամ մատչելի ձևաչափերի մասին: Խնդիրն առավել քան արդիական է, քանի որ այժմ Երևանում դրանք փոխարինվում են դեմքի ճանաչման համակարգերով և անմատչելի են հատկապես ցածրահասակ մարդկանց:

216. Հավելվածից բացակայում են ինտերակտիվ էկրանների մատչելիության պահանջները (բարձրություն, կոնտրաստ, ձայնային օգնություն):

217. Հավելվածում չի նշվում ինքնասպասարկման տերմինալների (բանկոմատներ, տոմսարկղեր, վճարային սարքեր) մատչելիության ստանդարտը: